

ՆԷԵՄԻԱՅԻ ԳԻՐՁԸ

ՆԷԵՄԻԱՅԻ ԳԻՐՁԸ

Աքաղիայի որդիին՝ Նէմիայի խօսքերը.-

Քասղեւ ամսուան մէջ, **Արտաշէս թագաւորին** քսաներորդ տարին, երբ ես Շուշան մայրաքաղաքն էի, **2** եղբայրներէս մէկը՝ Անանի ՚Հրէաստանէն եկաւ, ինք եւ **քանի մը** մարդիկ: Անոնց հարցուցի ազատուած – գերութենէն ճողոպրած – Հրեաներուն ու Երուսաղէմի մասին: **3** Ինծի պատասխանեցին. «Գերութենէն ճողոպրած մնացորդը գաւառին մէջ մեծ ձախորդութեան ու նախատինքի մէջ է. Երուսաղէմի պարիսպը քանդուած է, եւ անոր դռները կրակով այրուած են»:

4 Երբ այս խօսքերը լսեցի՝ նստայ, լացի, ու **քանի մը** օր սգացի: Ապա ծոմ պահելով երկինքի Աստուծոյն ՚աղօթեցի **5** եւ ըսի. «Ո՞վ ՚Տէր, երկինքի՝ Աստուած, մեծ ու ահեղ Աստուած, որ ուխտը կը պահես եւ կարեկից կ'ըլլաս քեզ սիրողներուն ու քու պատուիրաններդ պահողներուն. կ'աղերսե՛մ, **6** քու ականջներդ թող ուշադիր ըլլան եւ աչքերդ բաց ըլլան, որպէսզի լսես ծառայիդ աղօթքը, որ **ամէն** օր՝ ցերեկ ու գիշեր ՚քեզի կը մատուցանեմ», քու ծառաներուդ՝ Իսրայէլի որդիներուն՝ համար, խոստովանելով Իսրայէլի որդիներուն մեղքերը՝ որոնք քեզի դէմ ՚գործեցինք: **Արդարեւ թէ՛** ես եւ թէ իմ հօրս տունը մեղանչեցինք. **7** քու դէմդ չարիք գործեցինք, ու քու ծառայիդ՝ Մովսէսի ՚տուած պատուիրաններդ, կանոններդ եւ ՚դատավճիններդ չպահեցինք: **8 Սակայն** կ'աղերսե՛մ, յիշէ՛ այն խօսքը որ քու ծառայիդ՝ Մովսէսի ՚ըսիր. “**Եթէ** ուխտազանց ըլլաք՝ ծեզ ժողովուրդներուն մէջ պիտի ցրուեմ. **9** իսկ **Եթէ** ինծի վերադառնաք եւ իմ պատուիրաններս պահէք ու զանոնք գործադրէք, ծեզմէ աքսորուածները՝ նոյնիսկ եթէ երկինքի ծայրը ըլլան, զանոնք անկէ պիտի հաւաքեմ եւ այն տեղը պիտի տանիմ՝ որ ընտրեցի իմ անունս հոն բնակեցնելու համար□: **10** Անոնք քու մեծ կարողութեամբդ եւ ուժեղ ձեռքովդ ազատած ծառաներդ ու ժողովուրդդ են: **11** Ուստի հիմա, ո՞վ Տէր, կ'աղերսե՛մ, քու ականջդ թող ուշադիր ըլլայ ծառայիդ աղօթքին եւ քու անուննեղ վախնալէն ախորժող ծառաներուդ աղօթքին. ծառադ այսօր թող յաջողի, ու գթութիւն գտնել տուր անոր այս մարդուն առջեւ»: Արդարեւ ես թագաւորին մատուուակն էի:

ՆԵՄԻԱ Կ'ԵՐԹԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄ

^ա **Կամ՝ Յուդայէն**

^բ **Եբր.՝ պատուուած**

^գ **Եբր.՝ առջեւ աղօթեցի**

^դ **Եբր.՝ Եհովա**

^ե **Եբր.՝ քու առջեւդ կ'աղօթեմ**

^զ **Եբր.՝ մեղանչեցինք**

^է **Եբր.՝ պատուիրած**

^ը **Կամ՝ սովորութիւններդ**

^բ **Եբր.՝ պատուիրեցիր՝ ըսելով**

2

Նիսան ամսուան մէջ, Արտաշէս թագաւորին քսաներորդ տարին, անոր առջեւ գինի կար: Գինին առի ու թագաւորին տուի. անոր ներկայութեան **բնաւ** տրտում եղած չէի: **2** Թագաւորը ինծի ըսաւ. «Ինչո՞ւ երեսդ տրտում է, քանի հիւանդ չես. ատիկա **ուրիշ** բան չէ, բայց **միայն** սիրտի տրտմութիւն»: Ես յոյժ շատ վախցայ: **3** Այն ատեն թագաւորին պատասխանեցի. «Թագաւորը յաւիտեա՞ն ապրի. ի՞նչպէս երեսս տրտում չըլլայ, երբ իմ հայրերուս գերեզմաններուն տեղը եղող քաղաքը աւերուած է, ու կրակը սպառած է անոր դռները»: **4** Թագաւորը ինծի ըսաւ. «**Ասոր համար ինձմէ ի՞նչ կը բխնդրես**»: Այն ատեն երկինքի Աստուծոյն աղօթեցի **5** ու թագաւորին պատասխանեցի. «Եթէ թագաւորին հաճելի է, ու եթէ քու ծառադ առջեւդ շնորհք գտաւ», զիս Հրէաստա՞ն դրկէ, իմ հայրերուս գերեզմաններուն քաղաքը, որպէսզի զայն կառուցանեմ»: **6** Թագաւորը ինծի ըսաւ (թագուհին ալ անոր քով նստած էր). «Ո՞րչափ **ժամանակ** պիտի տեւէ քու ուղեւորութիւնդ, ու ե՞րբ պիտի վերադառնաս»: Թագաւորին հաճելի եղաւ որ զիս դրկէ. Ես ալ անոր ժամանակ մը ե՞րոշեցի: **7** Յետոյ թագաւորին ըսի. «Եթէ թագաւորին հաճելի է, ինծի նամակներ թող տրուին՝ Գետին միւս կողմը եղող կուսակալներուն համար, որպէսզի զիս անցընեն՝ մինչեւ որ Հրէաստան հասնիմ. **8** Նամակ մըն ալ՝ Ասափի համար, որ թագաւորին անտառին պահապան է, որպէսզի ինծի փայտ տայ՝ **Աստուծոյ** տան քովի միջնաբերոյին դռները, քաղաքին պարիսպը եւ իմ բնակելիք տունս կերտելու համար»: Թագաւորը **խնդրածներս** ինծի տուաւ, որովհետեւ իմ Աստուծոյս բարի ձեռքը վրաս էր:

9 Ուստի Գետին միւս կողմի կուսակալներուն գացի, եւ թագաւորին նամակները անոնց տուի. թագաւորը ինծի հետ զօրապետներ ու ձիաւորներ դրկած էր: **10** Երբ Որոնացի Սանաբաղատ եւ ամմոնացի ծառան՝ Տուբիա լսեցին, չափազանց դժգոհեցան որ մարդ մը եկած է հսրայէլի որդիներուն բարօրութիւն բերելու համար: **11** Երուսաղէմի հասայ ու հոն երեք օր մնացի:

12 Յետոյ գիշերը կանգնեցայ, ես եւ ինծի հետ փոքրաթիւ մարդիկ. ո՛չ մէկուն իմացուցած էի ինչ որ իմ Աստուածս սիրտիս մէջ դրած էր՝ որպէսզի երուսաղէմի համար ընեմ. իմ հեծած անասունէս զատ՝ ինծի հետ ուրիշ անասուն չկար: **13** Գիշերը դուրս ելայ՝

^ս **Եբր.**՝ տունը

^բ **Եբր.**՝ փնտռես

^գ **Եբր.**՝ լաւ

^դ **Եբր.**՝ երեսիդ լաւ եղաւ

^ե **Եբր.**՝ տուի

^գ **Եբր.**՝ ծառաստանին

^է **Եբր.**՝ մտնելիք

^լ **Եբր.**՝ գերաններով **միացնելու**

^բ **Եբր.**՝ փնտռելու

^ժ **Եբր.**՝ եղայ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Չորի դռնէն, Վիշապի աղբիւրին առջեւէն, դէպի Աղբի դուռը, եւ Երուսաղէմի ՚քանդուած պարիսպներն ու կրակէն սպառած դռները զննեցի: **14** Յետոյ Աղբիւրի դուռը եւ Թագաւորին աւազանը անցայ, բայց տակս եղող անասունին համար անցնելու տեղ չկար: **15** Ուստի՝ գիշերուան մէջ՝ ձորէն բարձրացայ, պարիսպը զննեցի, ապա վերադարձայ. Չորի դռնէն մտայ, եւ **այսպէս իմ տեղս** վերադարձայ: **16** Ատենակալները իմ ուր երթալս կամ ի՞նչ ընելս չգիտցան. մինչեւ այդ ատեն ոչինչ իմացուցած էի Հրեաներուն, կամ քահանաներուն, կամ ազնուականներուն, կամ ատենակալներուն, եւ կամ մնացեալներուն՝ որոնք գործը կը կատարէին:

17 Յետոյ անոնց ըսի. «Դուք կը տեսնէք այն ծախորդութիւնը՝ որուն մէջ ենք, թէ ի՞նչպէս Երուսաղէմ աւերուած է, եւ անոր դռները կրակով այրուած են: Եկէք, Երուսաղէմի պարիսպը կառուցանենք, որպէսզի ա՛ նախատինքի մէջ չըլլանք»: **18** Անոնց պատմեցի թէ ի՞նչպէս իմ Աստուծոյս բարի ձեռքը վրաս եղած էր, նաեւ թագաւորին ինձի ըսած խօսքերը: Անոնք ալ ըսին. «Կանգնի՞նք ու կառուցանենք», եւ իրենց ձեռքերը ուժովցուցին **այս բարի գործին** համար:

19 Բայց երբ Որոնացի Սանարադատ, ամմոնացի ծառան՝ Տուբիա եւ արաբ Գեսամ լսեցին, մեզ ծաղրեցին, ու մեզ արհամարհելով՝ ըսին. «Այս ի՞նչ գործ է՝ որ կ'ընէք. միհէ ըմբոստանա՞լ կ'ուզէք թագաւորին դէմ»: **20** Անոնց պատախանեցի. «Երկինքի Աստուածը՝ ի՞նք մեզի յաջողութիւն պիտի տայ: Մենք՝ անոր ծառաները՝ պիտի կանգնինք ու կառուցանենք, իսկ դուք Երուսաղէմի մէջ բաժին, իրաւունք եւ յիշատակ չունիք»:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՐԻՍՊԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

3

Եղիասիք քահանայապետն ու անոր քահանայ եղբայրները կանգնեցան եւ Ոչխարներու դուռը կառուցանեցին. զայն սրբացուցին ու անոր փեղկերը ^ատեղադրեցին. զայն մինչեւ Մէայի աշտարակը սրբացուցին, մինչեւ Անանայէլի աշտարակը: **2** Անոր քով Երիքովի մարդիկը կառուցանեցին, եւ անոնց քով իմրիի որդին՝ Զաքուր կառուցանեց: **3** Սենաայի որդիները կառուցանեցին Զուկերու դուռը. զայն ^բկերտեցին եւ անոր փեղկերը, կղպանքն ու նիգերը տեղադրեցին: **4** Անոնց քով Ակկուսի որդիին՝ Ուրիայի որդին՝ Մերամոթ նորոգեց. անոնց քով Մասիգեբէլի որդիին՝ Բարաքիայի որդին՝ Մեսուղամ նորոգեց. անոնց քով Բաանայի որդին՝ Սադովկ նորոգեց: **5** Անոնց քով Թեկուացիները նորոգեցին. բայց անոնց երեւելիները իրենց Տէրոց ծառայելու համար իրենց վիզը ^գչծուեցին: **6** Փասէի որդին՝ Յովիադա ու Բասոդիայի որդին՝ Մեսուղամ նորոգեցին Հին դուռը. զայն կերտեցին եւ անոր փեղկերը, կղպանքն ու նիգերը տեղադրեցին: **7** Անոնց քով՝ Գաբաւնացի Մելատիա, Մերոնոթացի Յադոն, **եւ** Գաբաւնի ու Մասիայի մարդիկը նորոգեցին՝ մինչեւ Գետին այս կողմը եղող կուսակալին գահը: **8** Անոր քով ոսկերիչներէն Հարհայիայի որդին՝ Ոզիէլ նորոգեց. անոր քով ^հբուրագործներէն **մէկուն** որդին՝ Անանիա նորոգեց. բայց

^ա **Եբր.**՝ պատոռուած

^ա **Եբր.**՝ կայնեցուցին

^բ **Եբր.**՝ գերաններով **միացուցին**

^գ **Եբր.**՝ չբերին

^դ **Այսիցը**՝ բոյրեր շինողներէն

ՆԵԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Երուսաղէմը թողուցին՝ մինչեւ Լայն պարիսպը: **9** Անոնց քով Ովրի որդին՝ Հռափայիա նորոգեց, Երուսաղէմի կէս շրջանին իշխանաւորը: **10** Անոնց քով եւ իր տան դիմաց՝ Հարումափի որդին՝ Յեղայիա նորոգեց. անոր քով Ասաբանիայի որդին՝ Քետսուս նորոգեց: **11** Հարիմի որդին՝ Մեղքիա ու Փահաթ-Մովսարի որդին՝ Ասուք նորոգեցին պարիսպին միւս բաժինը եւ Փուլերու աշտարակը: **12** Անոր քով Երուսաղէմի կէս շրջանին իշխանաւորը, Ալոհէսի որդին՝ Սեղում նորոգեց, ինք եւ իր աղջիկները: **13** Անոնց ու Զանովի բնակիչները նորոգեցին Չորի դուռը. զայն կառուցանեցին եւ անոր փեղկերը, կղպանքն ու նիգերը տեղադրեցին. պարիսպէն հազար կանգուն կառուցանեցին՝ մինչեւ Աղբի դուռը: **14** Բեթաքարմայի շրջանին իշխանաւորը, Ռեքաբի որդին՝ Մեղքիա նորոգեց Աղբի դուռը, եւ անոր փեղկերը, կղպանքն ու նիգերը տեղադրեց: **15** Մասփայի շրջանին իշխանաւորը, Թոլոզէի որդին՝ Սեղում նորոգեց Աղբիւրի դուռը. զայն կառուցանեց ու ծածկեց, եւ անոր փեղկերը, կղպանքն ու նիգերը տեղադրեց. Անեւ թագաւորին պարտէզին մօտ եղող Սիլովայի աւազանին պարիսպը կառուցանեց, մինչեւ Դաւիթի քաղաքէն իշնող աստիճանները: **16** Անկէ ետք՝ Բեթսուրի կէս շրջանին իշխանաւորը, Ազբուքի որդին՝ Նէեմիա նորոգեց մինչեւ Դաւիթի գերեզմաններուն դիմաց, մինչեւ Եարուեստական աւազանը ու մինչեւ Բեթագաբարին:

ՊԱՐԻՍՊԻՆ ՎՐԱՅ ԱՇԽԱՏՈՂ ԴԵՒՏԱՑԻՆԵՐԸ

17 Անկէ ետք Դեւտացիները նորոգեցին.՝ Բանիի որդին՝ Հռէում. անոր քով Կէիլայի կէս շրջանին իշխանաւորը՝ Ասաբիա իր շրջանը նորոգեց: **18** Անկէ ետք անոնց Եղայրները նորոգեցին.՝ Կէիլայի կէս շրջանին իշխանաւորը, Ենադադի որդին՝ Բաւայի: **19** Անոր քով Մասփայի իշխանաւորը, Յեսուսի որդին՝ Եզեր նորոգեց միւս բաժինը, **այսինքն՝ պարիսպին** դարձուածքը, որ զինարանի զառիվերին դիմաց է: **20** Անկէ ետք Զաբրայի որդին՝ Բարուք գիուլով նորոգեց միւս բաժինը, **պարիսպին** դարձուածքէն մինչեւ Եղիասիր քահանայապետին տան դուռը: **21** Անկէ ետք, Ակկուսի որդիին՝ Ուրիայի որդին՝ Մերամոթ նորոգեց միւս բաժինը, Եղիասիրի տան դոնէն մինչեւ Եղիասիրի տան ծայրը:

ՊԱՐԻՍՊԻՆ ՎՐԱՅ ԱՇԽԱՏՈՂ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ

22 Անկէ ետք Եղաշտաբնակ քահանաները նորոգեցին: **23** Անկէ ետք Բենիամին եւ Ասուք իրենց տուներուն առջեւ նորոգեցին. անկէ ետք Անանիայի որդիին՝ Մաասիայի որդին՝ Ազարիա իր տան դիմաց նորոգեց: **24** Անկէ ետք Ենադադի որդին՝ Բանուի նորոգեց միւս բաժինը, Ազարիայի տունէն մինչեւ **պարիսպին** դարձուածքը, մինչեւ անկիւնը: **25** Ոզայի որդին՝ Փաղաղ նորոգեց **պարիսպին** դարձուածքին ու թագաւորին վերի տան դուրսի աշտարակին դիմաց, որ բանտի բակին քով է. անոր Ետեւէն Փարոսի որդին՝ Փաղայիա նորոգեց: **26** Ոփաղ բնակող Նաթանայիմները նորոգեցին մինչեւ արեւելեան կողմը եղող Չորի դրան եւ դուրսի աշտարակին դիմաց:

ՈՒՐԻՇ ԾԻՆՈՂՆԵՐ

^ե Եբր.՝ շինուած

^գ Եբր.՝ բորբոքումով

^հ Եբր.՝ դաշտի մարդիկ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

27 Անկէ ետք թեկուացիները նորոգեցին միւս բաժինը, դուրսի մեծ աշտարակին դիմաց, մինչեւ Ոփաղի պարիսպը: **28** Չիերու դոնէն վեր՝ քահանաները նորոգեցին, իւրաքանչիւրը իր տան դիմաց: **29** Անկէ ետք եմմերի որդին՝ Սարովկ իր տան դիմաց նորոգեց. անկէ ետք Սեբենիայի որդին՝ Սեմայիա նորոգեց, արեւելեան դրան պահապանը: **30** Անկէ ետք Սեղեմիայի որդին՝ Անանիա ու Սեղեփի վեցերորդ որդին՝ Անոն նորոգեցին միւս բաժինը: Անկէ ետք Բարաքիայի որդին՝ Սեսուլամ իր մթերանոցին դիմաց նորոգեց: **31** Անկէ ետք Սարեփիի որդին՝ Մեղքիա նորոգեց, մինչեւ Նաթանայիմներուն ու Վաճառականներուն տունը՝ Մափկաթի դրան դիմաց, եւ մինչեւ անկիւնին Պառիվերը: **32** Ուկերիչներն ու Վաճառականները նորոգեցին անկիւնի զառիվերէն մինչեւ Ոչխարներու դուռը:

ՆԵՄԻԱԿ ԿԸ ՅԱՂԹԷ ԻՐ ԸՆԴԻՍԱԴԻՐՆԵՐՈՒՆ

4

Երբ Սանաբաղատ լսեց թէ մենք պարիսպը կը կառուցանենք, բորբոքեցաւ, շատ գրգռուեցաւ եւ Հրեաները ծաղրեց: **2** Իր եղբայրներուն ու Սամարիայի զօրագունդին առջեւ խօսեցաւ՝ ըսելով. «Ի՞նչ կը շինեն այս տկար Հրեաները. միթէ պիտի թույլատրե՞նք անոնց: Միթէ զո՞հ պիտի մատուցանեն. այսօ՞ր պիտի աւարտեն: Միթէ այրուած քարերը բիլատակներու դէզերէն պիտի վերակենդանացնե՞ն»: **3** Ամմոնացի Տուբիա, որ անոր քով էր, ըսաւ. «Եթէ նոյնիսկ աղուէս մը ելլէ անոնց կառուցանածին վրայ, անոնց քարէ պարիսպը պիտի գնանդէ»:

4 Ո՞վ մեր Աստուածը, լսէ՛, որովհետեւ արհամարհուեցանք. անոնց նախատինքը իրենց գլուխը վերադարձուր, ու զանոնք գերութեան երկրի մէջ կողոպուտի՛ մատնէ: **5** Անոնց անօրէնութիւնը մի՛ ծածկեր, եւ քու առջեւէդ անոնց մեղքը թող չշնջուի, քանի որ կառուցանողներուն առջեւ քեզ գրգռեցին:

6 Մենք պարիսպը կառուցանեցինք, եւ ամբողջ պարիսպը մինչեւ կէսը ոհասաւ. արդարեւ ժողովուրդը գործելու սիրտ ունէր:

7 Երբ Սանաբաղատ, Տուբիա, Արաբները, Ամմոնացիներն ու Ազովտացիները լսեցին թէ երուսաղէմի պարիսպներուն նորոգութիւնը կը յառաջանայ եւ ճեղքուածքները սկսած են խցուիլ, շատ բորբոքեցան, **8** ու բոլորը միասին դաւադրեցին՝ որ գան, երուսաղէմի դէմ պատերազմին, եւ անոր վնասեն: **9** Բայց մենք մեր Աստուծոյն աղօթեցինք, եւ անոնցմէ պաշտպանուելու համար՝ ցերեկ ու գիշեր անոնց դէմ պահակագունդ մը գորինք: **10**

^բ Կամ՝ ոսկերիչի

^բ Կամ՝ վերնատունը

^ս Եբր.՝ թողո՞ւն

^ս Եբր.՝ հողի

^գ Եբր.՝ պատոէ

^դ Եբր.՝ կապուեցաւ

^ե Եբր.՝ անոնց երեսէն

^գ Եբր.՝ կայնեցուցինք

ՆԵՐՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Սակայն Յուղա ըսաւ. «Բեռնակիրներուն ոյժը՝ տկարացաւ, եւ փլատակները շատ են. մենք պիտի չկարենանք պարիսպը կառուցանել»: 11 իսկ մեր թշնամիները կ'ըսէին. «Պիտի չգիտնան ու չտեսնեն, մինչեւ որ մենք անոնց մէջ մտնենք, զանոնք մեղսնենք եւ անոնց գործը դադրեցնենք»: 12 Բայց անոնց քով բնակող Հրեաները մեզի եկան ու տասը անգամ մեզի ըսին. «Բոլոր տեղերէն, ուր որ ալ դառնաք, մեր վրայ պիտի յարձակի՛»:

13 Ուստի ցած տեղերը՝ պարիսպին ետեւը, ճաեւ բարձր տեղերը ժողովուրդը՝ տեղաւորեցի՝ իրենց գերդաստաններուն համեմատ բաժնելով. իրենց սուրերով, նիզակներով եւ աղեղներով տեղաւորեցի: 14 Զննեցի, ապա կանգնեցայ եւ ազնուականներուն, ատենակալներուն ու մնացեալ ժողովուրդին ըսի. «Անոնցմէ մի՛ վախնաք. յիշեցէ՛ք Տէրը՝ որ մեծ ու ահեղ է, եւ պատերազմեցէ՛ք ձեր եղբայրներուն, որդիներուն, աղջիկներուն, կիներուն ու տուներուն համար»:

15 Երբ մեր թշնամիները լսեցին թէ մենք տեղեակ ենք եւ Աստուած իրենց ծրագիրը ձախողեցուցեր է, մենք բոլորս պարիսպը կառուցանելու վերադարձանք, ամէն մէկը իր գործին: 16 Այդ օրէն ի վեր իմ սպասաւորներուս կէսը գործը կը կատարէր, միւս կէսն ալ նիզակներ, վահաններ, աղեղներ եւ զրահներ կը բռնէր. իսկ իշխանաւորները Յուղայի ամրող տան ետեւն էին: 17 Պարիսպը կառուցանողները, բեռնակիրներն ու բեռցնողները, իրաքանչիւրը իր մէկ ձեռքով գործը կը կատարէր, իսկ միւս ձեռքով հզէնքը կը բռնէր: 18 Կառուցանողներէն իրաքանչիւրը՝ իր սուրը մէջքը կապած կը գործէր, ու շեփորահարը իմ քովս էր: 19 Ազնուականներուն, ատենակալներուն ու մնացեալ ժողովուրդին ըսի. «Այս գործը մեծ եւ ընդարձակ է, իսկ մենք պարիսպին վրայ ցրուած ենք՝ իրարմէ հեռու: 20 Ուստի այն տեղը՝ ուրկէ շեփորին ճայնը լսէք, հո՛ն հաւաքուեցէք՝ մեր քով. մեր Աստուածը պիտի պատերազմի մեզի համար»: 21 Այսպէս մեր գործը կը կատարէինք. ժողովուրդին կէսը նիզակներ կը բռնէր, արշալոյսին և ծագելէն մինչեւ աստղերուն ծերեւնալը: 22 Այդ ատեն ալ ժողովուրդին ըսի. «Իրաքանչիւրը իր սպասաւորին հետ Երուսաղէմի մէջ թող գիշերէ, որպէսզի գիշերը մեզի համար պահակագունդ ունենանք, ու ցերեկը գործեն»: 23 Ո՛չ ես, ո՛չ ալ իմ եղբայրներս, սպասաւորներս, եւ ինծի հետեւող պահակագունդին մարդիկը, ամենեւին մեր հագուստները չէինք հաներ. իրաքանչիւրը իր գէնքը ունէր և աց ձեռքին մէջ»:

ԱՂԹԱՏԻՆ ՀԱՐՍԱՀԱՐՈՒԹԻՒՆԸ

Ե Երր.՝ գայթեցաւ

Ը Երր.՝ ստորին

Պ Կամ՝ չոր

Ժ Երր.՝ կայնեցուցի

Ի Կամ՝ թուրը

Լ Երր.՝ անոնց

Խ Երր.՝ բարձրանալէն

Ծ Երր.՝ ելլելը

Կ Կամ՝ ջուրի Երթալու ատեն

5

Ժողովուրդին **մարդիկը** եւ անոնց կիները իրենց հրեայ եղբայրներուն դէմ մեծ աղաղակ բարձրացուցի՛: **2** Ոմանք կ'ըսէին. «Սենք, մեր որդիներն ու աղջիկները բազմաթիւ ենք. կ'ուզենք ցորեն ստանալ, որպէսզի ուստենք եւ ապրինք»: **3** Ոմանք ալ կ'ըսէին. «Սենք մեր արտերը, այգիներն ու տուները գրաւի կը դնենք, որպէսզի ցորեն ստանանք սովի ատեն»: **4** Իսկ ուրիշներ կ'ըսէին. «Թագաւորին հարկ տալու համար՝ մեր արտերը եւ այգիները գրաւի դնելով՝ դրամ փոխ առինք: **5** Թէպէտ մեր մարմինը մեր եղբայրներուն մարմինին պէս է, **ու** մեր որդիները՝ անոնց որդիներուն պէս, ահա՝ մենք մեր որդիներն ու աղջիկները բատրկութեան կը մատնենք», եւ **արդէ՛** մեր աղջիկներէն ստրկուհիներ կան. մեր ձեռքը կարող չէ **զանոնք փրկել**, որովհետեւ ուրիշներ ունին մեր արտերն ու այգիները»:

6 Երբ անոնց աղաղակը եւ այս խօսքերը լսեցի, շատ բորբոքեցայ: **7** «Միտքիս մէջ խորհելէ ետք՝ ազնուականներն ու ատենակալները յանդիմանեցի, եւ անոնց ըսի. «Դուք բոլորդ ալ ձեր եղբայրներէն վաշխ կ'առնէք»: Ձետոյ անոնց շուրջ մեծ բազմութիւն մը հաւաքեցի» **8** Եւ անոնց ըսի. «Սենք հեթանոսներուն ծախուած մեր հրեայ եղբայրները գնեցինք՝ մեր կարողութեան համեմատ, իսկ դուք նոյնիսկ ձեր եղբայրնե՞րը կը ծախէք. անոնք մեզի՞ պիտի ծախուէին»: Անոնք ալ լոեցին ու չշկրցան պատասխանել»: **9** Նաեւ ըսի. «Ինչ որ կ'ընէք՝ լաւ չէ. մեր Աստուծոյն վախով ընթանալու չէ՞ք, որպէսզի մեզի թշնամի եղող ազգերէն չնախատուինք: **10** Ես ալ, **ու** իմ եղբայրներս եւ սպասաւորներս ալ կրնայինք վաշխով՝ դրամ ու ցորեն փոխ տալ անոնց. **ուստի** այժմ շնորհե՞նք **անոնց** այս պարտքը»: **11** Ուրեմն այսօր իսկ անոնց վերադարձուցէք անոնց արտերը, այգիները, ծիրաստաններն ու տուները. Նաեւ հարիւրերո՞րդը **պահանջեցէք** այն դրամին, ցորենին, քաղցուին եւ իւղին, որ անոնց վաշխով փոխ տուած էք»: **12** Անոնք պատասխանեցին. «Պիտի վերադարձնենք, ու անոնցմէ **ոչինչ** պիտի պահանջենք: Ինչպէս ըսիր՝ այնպէս պիտի ընենք»: Այն ատեն քահանաները կանչեցի եւ անոնց երդում ընել տուի՝ որ այս խոստումը գործադրեն: **13** Նաեւ վերարկուս թօթուեցի եւ ըսի. «Ո՞վ որ այս խոստումը չգործադրէ, իր տունէն ու վաստակէն Աստուած այսպէս թող թօթուէ. այսպէս թող թօթուուի եւ պարպուի»: Ամբողջ համախմբումը ըսաւ. «Ամէն», ու **Տէրը** գովաբանեց. Եւ ժողովուրդը այս խոստումը գործադրեց:

^ա **Եբր.**՝ արտերուն եւ այգիներուն վրայ

^բ **Եբր.**՝ իբր ստրուկ կը նուաճենք

^գ **Եբր.**՝ նուաճուածներ

^դ **Եբր.**՝ Միրտիս

^ե **Եբր.**՝ դէմ մեծ համախմբում մը դրի

^ա **Եբր.**՝ ազգերուն

^բ **Եբր.**՝ պատասխան չգտան

^ը **Եբր.**՝ թողունք անոնց այս վաշխը

^թ **Եբր.**՝ ծոցս

^ժ **Եբր.**՝ չհաստատէ

ՆԵԵՄԻԱՅԻ ԱՆՇԱՀԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

14 Այն օրէն ի վեր՝ երբ ^հնշանակուեցայ անոնց կուսակալ ըլլալու Յուդայի երկրին մէջ, Արտաշէս թագաւորին քսաներորդ տարիէն մինչեւ երեսուներկրորդ տարին, տասներկու տարի՝ ո՛չ ես, ո՛չ ալ իմ եղբայրներս կուսակալի ոռոճիկը առինք^{“”}: **15** Բայց ինձմէ առաջ եղող նախկին կուսակալները ժողովուրդին ծանրութիւն կ'ըլլային, եւ անոնցմէ հաց ու գինի կ'առնէին՝ քառասուն սիկող արծաթէն զատ. անոնց սպասաւորներն ալ ժողովուրդին վրայ կը տիրէին: Բայց ես այնպէս չըրի՝ Աստուծմէ վախճալով: **16** Նաեւ այս պարիսպին գործին փարեցայ. մենք արտ չգնեցինք, եւ իմ բոլոր սպասաւորներս հոն հաւաքուած էին՝ **այդ** գործին համար: **17** Հրեաներէն ու ատենակալներէն հարիւր յիսուն հոգի իմ սեղանէս կ'ուտէին, նաեւ շրջակայ ազգերէն մեզի եկողները: **18** Ինչ որ ամէն օր ինձի համար կը պատրաստուէր՝ սա՛ էր.՝ արջառ մը, ու վեց ընտիր ոչխար. թռչնազգիներ ալ կը պատրաստուէին ինձի համար, ու տասը օրը անգամ մը՝ առատութեամբ ամէն տեսակ գինի: Հակառակ այս բոլորին՝ կուսակալի ոռճիկը չպահանջեցի, որովհետեւ այս ժողովուրդին ստրկութիւնը ծանր էր: **19** Ո՛վ իմ Աստուածս, յիշէ՛ զիս բարիքի համար՝ այս ժողովուրդին բոլոր ըրածներուս համեմատ:

ԴԱՒԵՐ ՆԵԵՄԻԱՅԻ ԴԷՍ

6

Երբ Սանաբաղատ, Տուբիա, արար Գեսամ եւ մեր միւս թշնամիները լսեցին թէ ես պարիսպը կառուցանեցի ու հոն ո՛չ մէկ ճեղքուածք մնաց, (թէպէտ մինչեւ այդ ատեն դոներուն փեղկերը տեղադրած չէի,) **2** Սանաբաղատ ու Գեսամ ինձի մարդ դրկեցին եւ ըսին. «Եկո՞ւր, Ովնովի դաշտին գիւղերուն մէջ իրարո՞ւ հանդիպինք»: Բայց անոնք ինձի շարիք ընել կը խորհէին: **3** Անոնց պատգամաւորներ դրկեցի՝ որ ըսեն. «Ես մեծ ագործով մը զբաղած եմ», ու չեմ կրնար իշնել: Ինչո՞ւ գործը դադրի, երբ զայն թողում ու ձեզի իշնեմ»: **4** Անոնք ինձի չորս անգամ այսպիսի պատգամ դրկեցին. ես ալ անոնց նոյն կերպով պատախանեցի: **5** Ֆետոյ Սանաբաղատ հինգերորդ անգամ ինձի դրկեց իր սպասաւորը՝ նոյն պատգամով, **ու** ձեռքը բաց նամակով մը, **6** որուն մէջ սա՛ գրուած էր. «Ազգերուն մէջ լսուեցաւ ու Գեսամ ալ կ'ըսէ թէ դուն ու Հրեաները ըմբռստանալ կը խորհիք. ասոր համար կը կառուցանես պարիսպը, եւ այս խօսքերուն համաձայն՝ դո՞ւն պիտի ըլլաս անոնց թագաւորը: **7** Նաեւ մարգարէներ հնշանակած ես, որպէսզի քեզ երուսաղէմի մէջ Հրէաստանի թագաւոր հոչակեն: Հիմա այս խօսքերը թագաւորին պիտի հաղորդուին». ուրեմն եկո՞ւր որ միասին խորհրդակցինք»: **8** Ուստի անոր մարդ դրկեցի՝ որ ըսէ. «Այդպիսի բան եղած չէ՝ ինչպէս կ'ըսես. հապա ատոնք դուն թեզմէ կը հնարես»: **9**

^հ Երբ.՝ ինձի պատուիրեց

^լ Երբ.՝ հացը կերանք

^մ Երբ.՝ գործ մը կը կատարեմ

^բ Երբ.՝ կայնեցուցած

^գ Երբ.՝ թագաւորէն պիտի լսուին

^դ Երբ.՝ սիրտէդ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

(Արդարեւ իրենք բոլորն **ալ կ'ուզէին** մեզ վախցնել՝ ըսելով. «Անոնց ձեռքերը գործէն պիտի թուղնան, եւ ան պիտի չկատարուի»։ Ուստի հիմա, **ո'վ Տէր,** ուժովցուր իմ ձեռքերս։)

10 Ձետոյ Մետաբեկի որդիին՝ Դաղայիայի որդիին՝ Սեմայիայի տունը գացի։ Ան **տաճ մէջ** փակուած էր, եւ ըսաւ. «Իրարո՛ հանդիպինք Աստուծոյ տունը, տաճարին մէջ, ու գոցե՛նք տաճարին դռները, որովհետեւ քեզ սպաննելու պիտի գան. անոնք գիշերը պիտի գան՝ քեզ սպաննելու»։ **11** Ես ալ պատասխանեցի. «Միթէ ինծի պէս մարդը կը վախչի⁹. Եւ ո'վ կայ ինծի պէս՝ որ տաճարը մտնէ ապրելու համար. չեմ մտներ»։ **12** Արդարեւ հասկցայ թէ Աստուած զինք դրկած չէր, հապա այս մարգարէութիւնը **իՃճիրմէ** խօսեցաւ ինծի դէմ, որովհետեւ Տուբիա եւ Սանաբաղատ զինք վարձած էին։ **13** Զինք վարձած էին՝ որպէսզի վախնամ, այդպէս ընելով՝ մեղանչեմ, ու իրենք **պատճառ** մը ունենան զիս անուանարկելու եւ նախատելու։ **14** Ո'վ իմ Աստուածս, յիշէ՛ Տուբիան ու Սանաբաղատը՝ այս իրենց արարքներուն համեմատ, նաեւ Նովադիա մարգարէուին ու զիս վախցնող միւս մարգարէները։

ԳՈՐԾԻՆ ՎԵՐՋԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

15 Պարիսպը իլու **ամսուան** քսանհինգերորդ **օրը** աւարտեցաւ, յիսուներկու օրուան մէջ։ **16** Երբ մեր բոլոր թշնամիները լսեցին, մեր շրջակայ բոլոր ազգերը վախցան. շատ **գնուաստացան**, եւ հասկցան թէ այս գործը մեր Աստուծոյն **օգնութեամբ** կատարուեցաւ։

17 Այդ օրերը Տուբիայի շատ նամակներ էկ'երթային Յուլայի ազնուականներէն. Տուբիայէն ալ **նամակներ** կու գային անոնց։ **18** Արդարեւ Հրէաստանէն շատեր անոր հետ երդումով միաբանած էին, քանի որ ան Արահեան Սեքենիայի փեսան էր, եւ անոր որդիին՝ Յոհանան, Բարաքիայի որդիին՝ Մետուղամի աղջիկը առած էր **իբր կին**։ **19** Նաեւ իմ առջես անոր բարերարութիւնները կը պատմէին, ու խօսքերս անոր ո'կը հաղորդէին։ Տուբիա **իՃծի** նամակներ կը դրկէր՝ զիս վախցնելու համար։

7

Երբ պարիսպը կառուցանուեցաւ եւ **Դոներուն** փեղկերը տեղադրեցի, դոնապանները, երգողներն ու Ղետացիները նշանակուեցան։ **2** Եղբայրս՝ Անանին, եւ միջնաբերդին իշխանաւորը՝ Անանիան (որ հաւատարիմ մարդ մըն էր, ու շատերէն աւելի կը վախնար Աստուծմէ) երուսաղէմի վրայ **նշանակեցի**, **3** եւ անոնց ըսի. «Երուսաղէմի դոները թող չքացուին՝ մինչեւ որ արեւը տաքնայ։ **Դոներուն** փեղկերը **ծեր ներկայութեան** թող գոցեն ու նիգերը դնեն։ Երուսաղէմի բնակիչներէն պահապաններ թող **գնշանակեն**,

^b **Եբր.**՝ Ահա՝

^a **Եբր.**՝ ինկան իրենց աչքերուն

^c **Եբր.**՝ կը շատնային

^d **Եբր.**՝ դուրս կը հանէին

^e **Եբր.**՝ պատուիրեցի

^f **Եբր.**՝ անոնց

^g **Եբր.**՝ կայնեցնեն

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

իրաքանչիւրը իր պահակագունդին մէջ եւ իրաքանչիւրը իր տան առջեւ»:

4 Ձաղաքը ընդարձակ ու մեծ էր, բայց մէջի ժողովուրդը փոքրաթիւ էր, եւ տուները կառուցանուած չէին: 5 Իմ Աստուածս սիրտիս մէջ դրաւ որ ազնուականները, ատենակալներն ու ժողովուրդը հաւաքեմ, որպէսզի ազգահամարի մէջ արձանագրուին: Առաջին անգամ **գերութենէն Երուսաղէմ** բարձրացողներուն ազգաբանութեան մէկ գիրքը գտայ, եւ անոր մէջ **հետեւեալը** գրուած գտայ.

ՏԱՐԱԳՐՈՒԹԵՆԵԼ ՎԵՐԱԴԱՐՁՈՂՆԵՐՈՒՆ ՑԱՆԿԸ (Եզր. 2. 1-70)

6 «Ահա՛ասիկ գաւառին ՚բճակիչները՝ որոնք գերութենէն կերադարձան, **այսինքն**՝ տարագիրներուն **որդիները** – Բարելոնի Նարուգոդնոսոր թագաւորը զանոնք Բարելոն փոխադրած էր – որոնք Երուսաղէմ ու Հրէաստան վերադարձան, իրաքանչիւրը՝ իր քաղաքը: 7 Անոնք Զօրաբաբէլի, Յեսուի, Նէմիայի, Ազարիայի, Ռաամիայի, Նաեմանիի, Մուրթքէի, Բաղասանի, Մասփարաթի, Բագուէի, Նաւումի **ու** Բաանայի հետ եկան: **Ահա՛ասիկ** Խրայէլի ժողովուրդին մարդոց թիւը.– 8 Փարոսի որդիները՝ երկու հազար հարիւր եօթանասուներկու հոգի էին, 9 Սափատիայի որդիները՝ երեք հարիւր եօթանասուներկու, 10 Արահի որդիները՝ վեց հարիւր յիսուներկու, 11 Փահաթ-Մովաքի որդիները՝ Յեսուի ու Յովաքի որդիներէն՝ երկու հազար ութիւնութիւնութիւն, 12 Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս, 13 Զաթուի որդիները՝ ութիւնութիւնութիւն, 14 Զաքքայի որդիները՝ եօթը հարիւր վաթսուն, 15 Բանուիի որդիները՝ վեց հարիւր քառասունութիւն, 16 Բերայիի որդիները՝ վեց հարիւր քսանութիւն, 17 Ազգադի որդիները՝ երկու հազար երեք հարիւր քսաներկու, 18 Աղոնիկամի որդիները՝ վեց հարիւր վաթսունեօթը, 19 Բագուէի որդիները՝ երկու հազար վաթսունեօթը, 20 Արինի որդիները՝ վեց հարիւր յիսունհինգ, 21 Ատերի որդիները՝ Եղեկիայէն՝ իննունութիւն, 22 Հասումի որդիները՝ երեք հարիւր քսանութիւն, 23 Բեսէիի որդիները՝ երեք հարիւր քսանչորս, 24 Արիփի որդիները՝ հարիւր տասներկու, 25 Գաբաւնի որդիները՝ իննունհինգ, 26 Բեթեհէմի ու Նետոփայի մարդիկը՝ հարիւր ութսունութիւն, 27 Անաթովթի մարդիկը՝ հարիւր քսանութիւն, 28 «Ազամօթի տան» մարդիկը՝ քառասուներկու, 29 Կարիաթարիմի, Կեփիրայի ու Բերովթի մարդիկը՝ եօթը հարիւր քառասուներեք, 30 Ռամայի ու Գաբայի մարդիկը՝ վեց հարիւր քսանմէկ, 31 Մաքմասի մարդիկը՝ հարիւր քսաներկու, 32 Բեթէլի ու Գայիի մարդիկը՝ հարիւր քսաներեք, 33 միւս Նաբաւի մարդիկը՝ յիսուներկու, 34 միւս Եղամի որդիները՝ հազար երկու հարիւր յիսունչորս, 35 Հարիմի որդիները՝ երեք հարիւր քսան, 36 Երիքովի որդիները՝ երեք հարիւր քառասունհինգ, 37 Ղովդի, Աղիդի եւ Ովնովի որդիները՝ եօթը հարիւր քսանմէկ, 38 Սենաայի որդիները՝ երեք հազար ինը հարիւր երեսուն:

39 «Ձահանաները.– Յեսուի տունէն՝ Յեղայիայի որդիները՝ ինը հարիւր եօթանասուներեք հոգի էին, 40 Եմմերի որդիները՝ հազար յիսուներկու, 41 Փասուրի որդիները՝ հազար երկու հարիւր քառասունեօթը, 42 Հարիմի որդիները՝ հազար տասնեօթը:

43 «Ղետացիները.– Ովդուիայի որդիներէն՝ Յեսուի եւ Կադմիէլի որդիները՝ եօթանասունչորս հոգի էին:

^a Երը՝ որդիները

^b Երը՝ բարձրացան

^c Կամ՝ Բեթազամօթի

44 «Երգողները.— Ասափի որդիները հարիւր քառասունութ հոգի էից:

45 «Դոնապանները.— Սեղումի որդիները, Ատերի որդիները, Տեղմոնի որդիները, Ակկուրի որդիները, Ատիտայի որդիները, Սուբայի որդիները՝ հարիւր երեսունութ հոգի էից:

46 «Նաքանայիմները.— Սիայի որդիները, Ասուփայի որդիները, Տաբաւոթի որդիները,

47 Կերոսի որդիները, Սիայի որդիները, Փաղոնի որդիները, 48 Դաբանայի որդիները, Ագաբայի որդիները, Սաղամէի որդիները, 49 Անանի որդիները, Գեղդէլի որդիները, Գահարի որդիները, 50 Ռէայիայի որդիները, Ռասինի որդիները, Նեկոդայի որդիները, 51 Գազամի որդիները, Ռզայի որդիները, Փասէի որդիները, 52 Բասիի որդիները, Մովանիմի որդիները, Նեփուսիմի որդիները, 53 Բակրոկի որդիները, Ակուփայի որդիները, Արուրի որդիները, 54 Բասաղոթի որդիները, Սէիդայի որդիները, Արսայի որդիները, 55 Բարկոսի որդիները, Սիսարայի որդիները, Թամայի որդիները, 56 Նեսիայի որդիները, Ասեփայի որդիները. 57 Սողոմոնին ծառաներուն որդիները, Սոտէի որդիները, Սոփերաթի որդիները, Փարեդայի որդիները, 58 Յեղայի որդիները, Դերկոնի որդիները, Գեղդէլի որդիները, 59 Սափատիայի որդիները, Ատտիլի որդիները, Փաքարաթ-Ասեբայիմի որդիները, Ամոնի որդիները. 60 բոլոր Նաքանայիմներն ու Սողոմոնի ծառաներուն որդիները երեք հարիւր իննուներկու հոգի էից»:

61 Ահա՛ասիկ թեղմեղայէ, թեղարսայէ, թերուբէ, Ադրոնէ ու Եմմերէ պվերադարձողները, որոնք իրենց բահապետութիւնը եւ իրենց զարմը չկրցան ապացուցանել, այսինքն՝ հսրայէլէն ըլլալը.— 62 Դաղայիայի որդիները, Տուբիայի որդիներն ու Նեկոդայի որդիները՝ վեց հարիւր քառասուներկու հոգի. 63 Անեւ քահանաներէն՝ Աբայիայի որդիները, Ակկուսի որդիները, Բերգելիի որդիները, որ Գաղաադացի Բերգելիի աղջկներէն կին առնելով՝ անոնց անունով կոչուեցաւ: 64 Ասոնք իրենց ազգահամարի արձանագրութիւնը փնտուցին, բայց չգտնուեցաւ. ուստի քահանայութենէ արգիլուեցան՝ իրը անմաքուր, 65 եւ հառավարիչը անոնց ըսաւ. «Մինչեւ որ Ուրիմով ու Թումիմով քահանայ մը չելլէ, անոնք ամենասուրբ բաներէն թող չուտեն»:

66 Համախմբումը քառասուներկու հազար երեք հարիւր վաթսուն հոգի էր՝ բոլորը միասին, 67 բացի անոնց ծառաներէն եւ աղախիներէն, որոնք եօթը հազար երեք հարիւր երեսունեօթը հոգի էից. անոնց մէջ երկու հարիւր քառասունհինգ երգիչներ ու երգչուիներ ալ կային: 68 Անոնց ծիերը՝ եօթը հարիւր երեսունվեց, ջորիները՝ երկու հարիւր քառասունհինգ, 69 ուղտերը՝ չորս հարիւր երեսունհինգ, եւ էշերը՝ վեց հազար եօթը հարիւր քսան հատ էին:

70 Նահապետներէն ոմանք գործին համար ընծայ տուին: Կառավարիչը հազար դրամ ոսկի, յիսուն կոնք ու հինգ հարիւր երեսուն քահանայական պատմուճան տուաւ գանձին: 71 Նահապետներէն ոմանք գործի գանձին քսան հազար դրամ ոսկի ու երկու հազար երկու

^է **Այսինքն՝ տաճարին ծառայութեան Ընծայուածները**

^ը **Եբր.՝ բարձրացողները**

^ը **Այսինքն՝ հայրերուն տունը**

^ժ **Եբր.՝ զգուելի**

^ի **Կամ՝ Աթարսաթան**

^լ **Այսինքն՝ Հայրերու գլխաւորներէն**

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

հարիւր մնաս արծաթ տուիհն: **72** Մնացեալ ժողովուրդին տուածներն էին՝ քսան հազար դրամ ոսկի, երկու հազար մնաս արծաթ եւ վաթունեօթը քահանայական պատմուման: **73** Քահանաները, Ղետացիները, դռնապաններն ու երգողները, ժողովուրդին եղողները, Նաթանայիմները եւ ամբողջ հսրայէլը իրենց քաղաքներուն մէջ բնակեցան:

Երբ եօթներորդ ամիսը հասաւ, հսրայէլի որդիները իրենց քաղաքներուն մէջ հաստատուած էին:

ԵԶՐԱՍ ԿԸ ԿԱՐԴԱՅ ՕՐԷՆՔԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

8

Ամբողջ ժողովուրդը մէկ մարդու պէս հաւաքուեցաւ Զուրի դրան առջեւի հրապարակը, ու Եզրաս դպիրին ըսին որ Մովսէսի Օրէնքին գիրքը բերէ, որ Տէրը հսրայէլի ստուեր էր: **2** Եօթներորդ ամսուան առաջին օրը, Եզրաս քահանան Օրէնքի **գիրքը** համախմբումին առջեւ բերաւ, **ուր կային** մարդիկ, կիներ, ու բոլոր **իրենց** լսածը **բհասկցողները**: **3** Զուրի դրան առջեւի հրապարակին մէջ՝ զայն առտուլնէ մինչեւ կէսօր կարդաց մարդոց, կիներուն եւ հասկցողներուն առջեւ. ամբողջ ժողովուրդը իր ականջները Օրէնքի գիրքին **ուշադիր էին**: **4** Եզրաս դպիրը փայտէ՝ **բեմի** մը վրայ կայնած էր, որ **այդ** **առիթով** շինած էին: Անոր աջ կողմը կայնած էին՝ Մատաթիա, Սեմա, Անանիա, Ուրիա, Թեղկիա ու Մաասիա, իսկ ձախ կողմը՝ **Փադայիա, Միսայէլ, Մեղքիա, Հասում, Ասբադանա, Զաքարիա** ու **Մեսուղամ**: **5** Եզրաս գիրքը բացաւ ամբողջ ժողովուրդին աչքերուն առջեւ, որովհետեւ ինք ամբողջ ժողովուրդէն բարձր էր. Երբ զայն բացաւ, ամբողջ ժողովուրդը ոտքի ելաւ: **6** Այն ատեն Եզրաս օրհնեց մեծ Աստուածը՝ Եհովան, եւ ամբողջ ժողովուրդը պատասխանեց. «Ամէն. ամէն», իրենց ձեռքերը վերցնելով: Յետոյ իրենց դէմքը մինչեւ գետին խոնարհեցուցին ու Տէրոց երկրպագեցին: **7** Յետու, Բանի, Սարաբիա, Յամին, Ակկուր, Սարեթա, Ովդիա, Մաասիա, Կովդիտա, Ազարիա, Յովզաբադ, Անան, Փադայիա եւ Ղետացիները ժողովուրդին կը հասկցնէին Օրէնքը. ժողովուրդը իր ետեղը **կայնած** էր: **8** Անոնք Աստուծոյ Օրէնքին գիրքը յստակօրէն կարդացին, եւ իմաստը տալով կարդացուածը հասկցուցին:

9 Նէմիա, որ **Կառավարիչն** էր, Եզրաս քահանան **ու** դպիրը, եւ ժողովուրդին սորվեցնող Ղետացիները ամբողջ ժողովուրդին ըսին. «Այս օրը Տէրոց՝ ձեր Աստուծոյն էսուրը է, ուստի մի՛ սգաք ու մի՛ լաք». արդարեւ ամբողջ ժողովուրդը կու լար՝ Երբ Օրէնքին խօսքերը կը լսէր: **10** Նաեւ անոնց ըսաւ. «Գացէ՛ք, **բհամե՛ն** կերակուրներ» կերէք

^ա **Եբր.**՝ պատուիրած

^բ **Այսինքն**՝ հասկնալու կարողութիւն ունեցողները

^գ **Եբր.**՝ աշտարակի

^դ **Եբր.**՝ պատճառով

^ե **Եբր.**՝ կայանը

^գ **Կամ**՝ Աթարսաթան

^է **Կամ**՝ սրբացուած

^լ **Եբր.**՝ պարարտ բաներ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Եւ քաղցր ըմպելիներ խմեցէք, ու բաժիններ դրկեցէք անոնց՝ որ ոչինչ պատրաստ ունին, քանի որ այս օրը մեր Տէրոց սուրբ է: Մի՛ վշտանաք, որովհետեւ Տէրոց ուրախութիւնը ձեր թգօրութիւնն է»: **11** Այն ատեն Ղետացիները ամբողջ ժողովուրդը լոեցուցին՝ ըսելով. «Լո՛ու կեցէք, որովհետեւ ասիկա սուրբ օր է, ու մի՛ վշտանաք»: **12** Ուստի ամբողջ ժողովուրդը գնաց ուտելու, խմելու, բաժիններ դրկելու եւ մեծ ուրախութիւն ընելու, որովհետեւ իրենց բացատրուած խօսքերը հասկցան:

ՏԱՂԱԻԱՐՆԵՐՈՒ ՏՕՆԸ

13 Երկրորդ օրը՝ ամբողջ ժողովուրդին նահապետները, քահանաներն ու Ղետացիները եզրաս դպիրին քով հաւաքուեցան, որպէսզի Օրէնքին խօսքերը հասկնան: **14** Օրէնքի գիրքին մէջ գրուած գտան թէ Տէրը Մովսէսի միջոցով պատուիրեր էր որ եօթներորդ ամսուան տօնին **ատենը** Խրայէլի որդիները տաղաւարներու մէջ բնակին, **15** նաեւ իրենց բոլոր քաղաքներուն մէջ ու երուսաղէմի մէջ՝ քարոզեն եւ՝ ‘ծանուցանեն’ ըսելով. «Լո՛որ կացէք ու բերէ՛ք ձիթենիի ոստեր, չվայրի ձիթենիի” ոստեր, մրտենիի ոստեր, արմաւենիի ոստեր եւ տերեւախիտ ծառերու ոստեր, որպէսզի տաղաւարներ շինէք, ինչպէս գրուած է»: **16** Ժողովուրդն ալ գնաց ու բերաւ, եւ իրենց տաղաւարներ շինեցին՝ իւրաքանչիւրը իր տանիքին վրայ, իրենց բակերուն մէջ, Աստուծոյ տան գալիթներուն մէջ, Զուրի դրան հրապարակին մէջ ու Եփրեմի դրան հրապարակին մէջ: **17** Գերութենէն վերադարձողներուն ամբողջ համախմբումը տաղաւարներ շինեց եւ տաղաւարներու մէջ բնակեցաւ: Արդարեւ՝ Նաւեան Յեսուի օրերէն մինչեւ այդ օրը՝ Խրայէլի որդիները այդպէս ըրած չէին, ու յոյժ մեծ ուրախութիւն եղաւ: **18** Ամէն օր Աստուծոյ Օրէնքին գիրքը կարդացուեցաւ, առաջին օրէն մինչեւ վերջին օրը: Եօթը օր տօն կատարեցին, եւ ութերորդ օրը տօնախմբութիւն եղաւ՝ կանոնին համաձայն:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ԽՈՍՏՈՎԱՆԻ ԻՐ ՄԵՂՁԵՐԸ

9

Այս ամսուան քսանչորրորդ օրը, Խրայէլի որդիները հաւաքուեցան՝ ծոմապահութեամբ ու քուրծերով, եւ իրենց վրայ հող **ցանած**: **2** Խրայէլի զարմը բոլոր օտարազգիներէն զատուեցաւ, ու **Աստուծոյ առջեւ**՝ “ներկայանալով՝ իրենց մեղքերը եւ իրենց հայրերուն անօրէնութիւնները խոստովանեցան: **3** Իրենց բտեղը կանգնելով՝ օրուան մէկ քառորդը

^բ **Եբր.**՝ ամրոցն

^ծ **Եբր.**՝ ձեռքով

^հ **Եբր.**՝ լսել տան

^լ **Եբր.**՝ ձայն անցընեն

^ի **Եբր.**՝ դուրս ելէք

^ծ **Եբր.**՝ իւղի ծառի

^ս **Եբր.**՝ կայնելով

^բ **Եբր.**՝ կայանը

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Տէրոց՝ իրենց Աստուծոյն Օրէնքի գիրքէն կարդացին, ու մէկ քառորդը Տէրոց՝ իրենց Աստուծոյն խոստովանեցան ու երկրպագեցին:

4 Յեսու, Բանի, Կարմիէլ, Սաբանիա, Բունի, Սարաբիա, Բանի **եւ** քենանի Ղետացիները ^{գեմին} վրայ կանգնեցան ու բարձր ծայնով Տէրոց՝ իրենց Աստուծոյն աղաղակեցին: 5 Յեսու, Կարմիէլ, Բանի, Ասաբանիա, Սարաբիա, Ովդիա, Սաբանիա **ու** Փեթայիա Ղետացիները ըսին. «Կանգնեցէք **եւ** օրհնեցէք Տէրը՝ ձեր Աստուածը Դարէ դար»: **Եզրաս աղօթեց...**

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՁԸ

«Օրհնեալ ըլլայ քու փառաւոր անունդ, որ ամէն օրհնաբանութենէ ու գովաբանութենէ բարձր է: 6 Դո՛ւն, միայն դուն Տէր ես. դո՛ւն ^{ես}տեղ ծեցիր երկինքը, երկինքներուն երկինքը եւ անոնց բոլոր զօրքերը, երկիրն ու անոր վրայ եղած ամէն ինչ, ծովերը եւ անոնց մէջ եղած ամէն ինչ. դո՛ւն անոնք բոլորը կ'ապրեցնես, ու երկինքի զօրքերը քեզի՝ կ'երկրպագեն: 7 Դո՛ւն ես այն Տէր Աստուածը՝ որ Աբրամը ընտրեցիր, զայն Քաղէացիներու Ուր **քաղաքէն** հանեցիր, եւ անոր անունը Աբրահամ դրիր: 8 Անոր սիրտը քու առջեւդ հաւատարիմ գտար, ուստի անոր հետ ուստ կնքեցիր որ Քանանացիներուն, Քետացիներուն, Ամորհացիներուն, Փերեզացիներուն, Յերուսացիներուն ու Գերգեսացիներուն երկիրը իր զարմին տաս, եւ քու խօսքդ իրագործեցիր, որովհետեւ արդար ես:

9 «Եգիպտոսի մէջ մեր հայրերուն տառապանքը տեսար, ու Կարմիր ծովուն քով անոնց աղաղակը լսեցիր: 10 Փարաւոնի, իր բոլոր ծառաներուն եւ իր երկրին ամբողջ ժողովուրդին նշաններ ու հրաշքներ ^{ցոյց տուիր}՝, քանի գիտէիր թէ անոնց դէմ հպարտացան, ուստի քեզի **մեծ** անուն վաստկեցար, ինչպէս այսօր **կը տեսնուի:** 11 Ծովը անոնց առջեւ ճեղքեցիր, այնպէս որ ծովուն մէջէն անցան՝ ցամաքի վրայէն **քալելով.** իսկ զանոնք հետապնդողները խորխորատը նետեցիր՝ խորունկ ջուրերու մէջ **հետուած** քարի պէս: 12 Յերեկը ամպի սիւնով առաջնորդեցիր զանոնք, ու գիշերը՝ կրակի սիւնով, իրենց երթալիք ճամբային մէջ զանոնք լուսաւորելու համար:

13 «Նաեւ Սինա լերան վրայ իջար, երկինքէն խօսեցար անոնց հետ, եւ ուղիղ բդատավճիռներ, ճշմարիտ օրէնքներ, լաւ կանոններ ու պատուիրաններ տուիր անոնց: 14 Քու սուրբ Շաբաթդ ճանչցուցիր անոնց, ու ծառայիդ՝ Մովսէսի թմիջոցով պատուիրաններ, կանոններ եւ օրէնքներ ^{տուիր} անոնց: 15 Երբ անօթեցան՝ երկինքէն հաց տուիր անոնց.

^գ **Կամ՝** աստիճաններուն

^դ **Եբր.**՝ յաւիտենականութենէ յաւիտենականութիւն

^ե **Եբր.**՝ ըրիր

^զ **Եբր.**՝ տուիր

^է **Եբր.**՝ զօրաւոր

^լ **Կամ՝** սովորութիւններ

^ը **Եբր.**՝ ձեռքով

^ժ **Եբր.**՝ պատուիրեցիր

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Երբ ծարաւցան՝ ժայռէն ջուր հանեցիր անոնց. եւ անոնց ըսիր՝ որ մտնեն ու տիրանան այն երկրին, որուն համար հերդում ըրիր “անոնց տալու:

16 «Բայց անոնք, այսինքն մեր հայրերը, հպարտացան, իրենց պարանոցը խստացուցին, ու քու պատուիրաններուդ չհնազանդեցան: 17 Մերժեցին մտիկ ընել, եւ չյիշեցին իրենց մէջ ըրած սքանչելիքներդ. հապա իրենց պարանոցը խստացուցին, ու իրենց ըմբոստութեան մէջ՝ գլխաւոր մը կարգեցին, որպէսզի իրենց ստրկութեան վերադառնան: Բայց դուն ներող, ողորմած, գթած, համբերատար եւ շատ կարեկից Աստուած ես, ու զանոնք չլրեցիր. 18 նոյնիսկ երբ անոնք իրենց ձուկածոյ հորթ շինեցին եւ ըսին. “Ասիկա՛ է քու աստուածդ՝ որ քեզ եգիպտոսէն բարձրացուց□, քեզ մեծապէս անարգելով: 19 Զանոնք անապատին մէջ չլրեցիր՝ քու առաստ գթութեամբդ. ցերեկը ամսի սիւնը անոնց վրայէն չհեռացաւ՝ ճամբային մէջ զանոնք առաջնորդելու համար, ո՛չ ալ գիշերը կրակի սիւնը՝ իրենց երթալիք ճամբային մէջ զանոնք լուսաւորելու համար: 20 Նաեւ քու բարի Հոգիդ տուիր՝ զանոնք ուշիմ ընելու համար. քու մանանադ՝ չպակսեցուցիր անոնց բերանէն, ու ջուր տուիր անոնց՝ երբ ծարաւցան: 21 Զանոնք քառասուն տարի կերակրեցիր անապատին մէջ, ուր անոնց ոչինչ պակսեցաւ. անոնց հանդերձները չմաշեցան եւ անոնց ոտքերը չուռեցան: 22 Անոնց թագաւորութիւններ ու ժողովուրդներ տուիր, եւ անոնց հողամասեր բաժնեցիր. անոնք տիրացան Սեհոնին երկրին, այսինքն՝ Եսեբոնի թագաւորին երկրին, նաեւ Բասանի Ովգ թագաւորին երկրին: 23 Անոնց որդինները երկինքի աստղերուն չափ բազմացուցիր, ու տարիիր զանոնք այն երկիրը՝ որ իրենց հայրերուն խոստացեր էիր, որպէսզի հոն մտնեն եւ անոր տիրանան: 24 Անոնց որդինները մտան ու այդ երկրին տիրացան. այդ երկրին մէջ բնակող թանանացինները իրենց առջեւ ընկճեցիր, եւ իրենց ձեռքը մատնեցիր զանոնք, անոնց թագաւորներն ու երկրին ժողովուրդը, որպէսզի անոնց հետ վարուէին իրենց կամքին համաձայն: 25 Պարսպապատ քաղաքներ ու բերրի կերկիր մը գրաւեցին, եւ ամէն տեսակ բարիքներով լեցուն տուններու, փորուած ջրհորներու, այգիններու, ծիթաստաններու եւ բազմաթիւ պտղաբեր ծառերու տիրացան. կերան, կշտացան ու գիրցան, եւ զուարճացան՝ քու մեծ բարութեամբդ:

26 «Սակայն քեզի անհնազանդ եղան եւ քեզի դէմ ըմբոստացան. քու Օրէնքդ իրենց կոնակին ետեւ նետեցին ու մարգարէններդ ալ սպաննեցին, որ զիրենք քեզի վերադարձնելու համար՝ չիրենց դէմ կը վկայէին», եւ քեզ մեծապէս անարգեցին: 27 Դուն ալ զանոնք իրենց թշնամիններուն ձեռքը մատնեցիր, որոնք զիրենք ճնշեցին: Երբ իրենց տագնապին ատենը քեզի աղաղակեցին, դուն երկինքն լսեցիր եւ քու առաստ գթութեանդ համեմատ անոնց փրկիչներ տուիր, որոնք զանոնք ազատեցին իրենց թշնամիններուն ձեռքէն: 28 Բայց երբ հանգստացան, դարձեալ քու առջեւդ չարիք գործեցին. ուստի

^ի Երբ.՝ ձեռքդ վերցուցիր

^լ Կամ եւ

^{իւ} Երբ.՝ չարգիլեցիր

^ծ Երբ.՝ կողմեր

^կ Երբ.՝ հող

^հ Երբ.՝ պարարտացան

^չ Կամ զիրենք կը յանդիմանէին

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

զանոնք իրենց թշնամիներուն ձեռքը լքեցիր, որոնք իրենց վրայ տիրապետեցին: Երբ դարձեալ քեզի աղաղակեցին, դուն երկինքէն լսեցիր եւ բազմաթիւ անգամներ զիրենք ազատեցիր՝ քու գթութեանդ համեմատ: **29** Անոնց դէմ վկայեցիր՝ զիրենք քու Օրէնքիդ վերադարձնելու համար. բայց անոնք հպարտացան, քու պատուիրաններուդ չհնազանդեցան եւ քու կանոններուդ դէմ մեղանչեցին, որոնք գործադրող մարդը անոնցմով կ'ապրի: **Իրենց** ուսերը ընդվզեցուցին, իրենց պարանոցը խստացուցին, ու չհնազանդեցան: **30** Շատ տարիներ անոնց ոհանդուրժեցիր, եւ քու Հոգիովդ իրենց դէմ վկայեցիր՝ քու մարգարէներուդ միջոցով, բայց անոնք չունկնդրեցին. ուստի զանոնք **ուրիշ** երկիրներու ժողովուրդներուն ձեռքը մատնեցիր: **31** Սակայն զանոնք չսպառեցիր ու չլեցիր՝ քու առատ գթութեամբդ, որովհետեւ դուն ողորմած եւ գթած Աստուած ես:

32 «Եւ հիմա, **ո՛վ** մեր Աստուածը, մեծ, գօրաւոր եւ ահեղ Աստուածը, որ ովստը կը պահես ու կարեկից կ'ըլլաս, քու առջեւդ թող քիչ չերեւնայ այն ամբողջ տաժանքը՝ որ Ասորեստանի թագաւորներուն օրերէն մինչեւ այսօր պատահեցաւ մեզի, մեր թագաւորներուն, մեր իշխանաւորներուն, մեր քահանաներուն, մեր մարգարէներուն, մեր հայրերուն, եւ քու ամբողջ ժողովուրդիդ: **33** Սակայն բոլոր մեզի պատահածներուն մէջ դուն արդար ես, որովհետեւ դուն ճշմարտութեամբ վարուեցար, իսկ մենք՝ ամբարշտութեամբ: **34** Մեր թագաւորները, իշխանաւորները, քահանաներն ու հայրերը քու Օրէնքդ չպահեցին. քու պատուիրաններուդ եւ իրենց դէմ տուած վկայութիւններուդ ուշադիր չեղան: **35** Իրենց թագաւորութեան ատենը՝ երբ իրենց շատ բարիքներ տուիր, այն ընդարձակ ու բերրի երկրին մէջ՝ որ իրենց առջեւ դրիր, քեզ չպաշտեցին եւ իրենց չար գործերէն չհեռացան: **36** Ահա՝ մենք այսօր ստրուկ ենք. մանաւանդ այն երկրին մէջ՝ որ մեր հայրերուն տուիր, որպէսզի անոր պտուղներն ու բարիքները ուտեն, ահա՝ մենք հոն ստրուկ ենք: **37** Անոր առատ բերքը այն թագաւորներուն համար է, որ մեր վրայ կարգեցիր՝ մեր մեղքերուն համար. անոնք մեր մարմինին վրայ ու մեր անաստոններուն վրայ կը տիրեն՝ իրենց կամքին համաձայն, եւ մենք մեծ տագնապի մէջ ենք: **38** Այս բոլորին համար մենք հաստատ ուխտ մը կ'ընենք ու զայն կը գրենք, եւ մեր իշխանաւորները, Ղետացիներն ու քահանաները զայն կը կնքեն»:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՍՈՐԱԳՐԵ ՀԱՄԱՅՆԱԳԻՐ ՄԸ

10

Ահա՛ասիկ կնքողները.— Աքաղիայի որդին՝ Նէմիա ակառավարիչը, եւ Սեղեկիա. **2** Սարայիա, Ազարիա, Երեմիա, **3** Փասուր, Ամարիա, Մեղքիա, **4** Թետտուս, Սաբանիա, Սալուք, **5** Հարիմ, Մերամոթ, Աբդիա, **6** Դանիէլ, Կանաթոն, Բարուք, **7** Մեսուղամ, Աբիա, Միամին, **8** Մաազիա, Բեղգա ու Սեմայիա. ասոնք քահանաներն էին: **9** Նաև Ղետացիները.— Ազանիայի որդին՝ Ձեսու, Ենադադի որդիներէն՝ Բանուի, Կադմիէլ, **10** եւ

¹ **Եբր.**՝ մասին քաշեցիր

² **Եբր.**՝ ձեռքով

³ **Եբր.**՝ վկայած

⁴ **Եբր.**՝ տուիր

⁵ **Եբր.**՝ կը կնքենք

⁶ **Կամ** Աթարսաթան

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

անոնց եղբայրները՝ Սաբանիա, Ովդիա, Կովդիտա, Փաղայիա, **11** Անան, Միքա, Ռոհոր, Ասարիա, **12** Զաքուր, Սարաբիա, Սաբանիա, **13** Ովդիա, Բանի **ու** Բանինու: **14** Ժողովուրդին գլխաւորները.— Փարոս, Փահաթ-Մովաք, Եղամ, **15** Զաթուր, Բանի, Բունի, Ազգադ, **16** Բեբայի, Աղոնիա, Բագուէ, Արին, **17** Ատեր, Եզեկիա, Ազուր, **18** Ովդիա, Հասում, Բեսէի, **19** Արիփ, Անաթովթ, Նովրայ, **20** Մագփիաս, Մեսուղամ, Եզիր, **21** Մասիգերէլ, Սադովկ, Յադուա, **22** Փաղատիա, Անան, Անանիա, **23** Ովսէէ, Անանիա, Ասուր, **24** Ալոհէս, Պիլա, Սորէկ, **25** Հոկում, Ասաբանա, Մաասիա, **26** Աքիա, Անան, Օնան, **27** Մալուք, Հարիմ **ու** Բաանա:

ՀԱՍՏԱՅԻՆԱԳԻՐԸ

28 Մնացեալ ժողովուրդը, քահանաները, Ղետացիները, դռնապանները, երգողները, Նաթանայիմները, եւ բոլոր անոնք՝ որ երկիրներու ժողովուրդներէն զատուած էին՝ Աստուծոյ Օրէնքին **հետեւելու** համար, իրենց կիները, որդիներն ու աղջիկները, **այսինքն** բոլոր անոնք՝ որ **Կրնային** հասկնալ, **29** իրենց երեւելի **գեղբայրներուն** թիկունք եղան՝ եւ անէծքով երդում ըրին, որ Աստուծոյ ծառային՝ Մովսէսի **միջոցով** տրուած Աստուծոյ Օրէնքին համաձայն ընթանան, եւ մեր **Տէրոց՝ Եհովայի** բոլոր պատուիրանները, **եղատավճիռներն** ու կանոնները պահեն եւ գործադրեն: **30** Նաեւ **խոստացանք**, որ մեր աղջիկները երկրին ժողովուրդներուն չտանք, եւ անոնց աղջիկները մեր որդիներուն չառնենք. **31 Եթէ** երկրին ժողովուրդները Շաբաթ օրը ծախելու համար ապրանք եւ ամէն տեսակ հացահատիկ բերեն, անոնցմէ չառնենք Շաբաթ **օրը** կամ սուրբ օրերը, իսկ եօթներորդ տարին **Աներենք** բոլոր պարտքերը”: **32** Մեզի **կանոն դրինք**”, որ ամէն տարի սիկդին մէկ երրորդը տանք՝ մեր Աստուծոյն տան ծառայութեան, **33** **Պառաջադրութեան** հացին, մշտատեւ **հացի** ընծային, մշտատեւ ողջակէզին, Շաբաթ **օրերուն**, **Պամսագլուխներուն**, հանդիսաւոր տօններուն, **սուրբ բաներուն**”, իսրայէլի **մեղերու** քաւութեան պատարագներուն” եւ մեր Աստուծոյն տան ամբողջ գործին համար: **34** (Փայտի մատուցումին համար՝ քահանաներուն, Ղետացիներուն ու ժողովուրդին մէջ վիճակ ձգեցինք, որ **զայն** ամէն տարի՝ որոշուած ատենները՝ մեր Աստուծոյն տունը

^բ **Եբր.**՝ գիտէին

^գ **Եբր.**՝ եղբայրները ուժովցուցին

^դ **Եբր.**՝ ձեռքով

^ե **Կամ**՝ սովորութիւններն

^զ **Եբր.**՝ ձգենք ամէն ձեռքի վաշխը

^է **Եբր.**՝ պատուիրան կեցուցինք

^բ **Եբր.**՝ կարգով **դրուած**

^թ **Եբր.**՝ նոր լուսիններուն

^ժ **Եբր.**՝ սրբացուածներուն

^ի **Եբր.**՝ քաւութեան համար մեղքի պատարագներուն

տանինք նահապետութիւններուն համեմատ, Տէրոց՝ մեր Աստուծոյն զոհասեղանին վրայ վառելու համար՝ ինչպէս Օրէնքին մէջ գրուած է:)³⁵ Նաեւ խոստացանք մեր գետինին երախայրիքը եւ ամէն ծառի բոլոր պտուղներուն երախայրիքը Տէրոց տունը տանիլ ամէն տարի, ³⁶ նաեւ մեր որդիններուն ու մեր անասուններուն անդրանիկները՝ ինչպէս Օրէնքին մէջ գրուած է. մեր արջառներուն եւ ոչխարներուն առջիններն ալ մեր Աստուծոյն տունը տանիլ՝ մեր Աստուծոյն տան մէջ պաշտօն կատարող քահանաներուն: ³⁷ Մեր խմորներուն երախայրիքը, մեր բարձրացնելիք ընծաները, **այսինքն՝** ամէն **տեսակ** ծառի պտուղը, քաղցուն ու իւղը պիտի տանինք քահանաներուն՝ մեր Աստուծոյն տան սենեակներուն մէջ, ու մեր գետինին **արտադրութեան** տասանորդը՝ Ղետացիններուն. Ղետացինները մեր բոլոր ծողութեան քաղաքներուն մէջ տասանորդներ պիտի առնեն: ³⁸ Ահարոնի որդին՝ քահանան՝ Ղետացիններուն հետ պիտի ըլլայ, երբ Ղետացինները տասանորդ առնեն. Ղետացիններն ալ տասանորդին տասանորդը պիտի տանին մեր Աստուծոյն տունը՝ գանձատան սենեակները: ³⁹ Արդարեւ հսրայէլի որդիններն ու Ղետիի որդինները ցորենին, քաղցուին եւ իւղին բարձրացնելիք ընծան **այդ** սենեակները պիտի տանին, ուր կը գտնուին սրբարանին առարկաներն ու պաշտօն կատարող քահանաները, դռնապանները եւ երգողները: Այսպէս՝ մեր Աստուծոյն տունը պիտի չըքենք:

ԵՐՈՒՍԱՂԵՄ ԲՆԱԿՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

11

Ժողովուրդին իշխանաւորները Երուսաղէմ բնակեցան: Մնացեալ ժողովուրդն ալ վիճակ ծգեց, որպէսզի տասնէն մէկը գայ Երուսաղէմ՝ սուրբ քաղաքը բնակելու, իսկ **միւս** “ինը՝ ուրիշ քաղաքներ բնակին: ² Ժողովուրդը օրհնեց այն բոլոր մարդիկը, որ իրենք զիրենք յօժարակամ ընծայեցին՝ Երուսաղէմ բնակելու: ³ Ահաւասիկ Երուսաղէմ բնակող գաւառին գլխաւորները (իսկ Յուդայի քաղաքներուն մէջ՝ հսրայէլի **մնացորդը**, քահանաները, Ղետացինները, Նաթանայիմներն ու Սողոմոնի ծառաներուն որդինները բնակեցան, իւրաքանչիւրը իր կալուածին մէջ, իրենց քաղաքներուն մէջ: ⁴ Յուդայի որդիններէն եւ Բենիամինի որդիններէն **ումանք** ալ Երուսաղէմ բնակեցան:).

Յուդայի որդիններէն՝ Մաղաղիէլի որդիին՝ Սափատիայի որդիին՝ Ամարիայի որդիին՝ Զաքարիայի որդիին՝ Ոզիայի որդիին՝ Աթայիա, որ Փարէսի որդիններէն էր. ⁵ Սիլոնիի որդիին՝ Զաքարիայի որդիին՝ Յովարիբի որդիին՝ Ադայիայի որդիին՝ Ազայիայի որդիին՝ Քոլոզէի որդիին՝ Բարութի որդիին՝ Մաասիա: ⁶ Երուսաղէմ բնակող Փարէսի բոլոր որդինները չորս հարիւր վաթսունութ կտրիճ էին:

⁷ Ահաւասիկ Բենիամինի որդինները. Եսայիի որդիին՝ Իթիէլի որդիին՝ Մաասիայի որդիին՝ Կովդիայի որդիին՝ Փադայիայի որդիին՝ Յովարիի որդիին՝ Մետուղամի որդիին՝ Սալլու: ⁸ Անկէ ետք՝ Գեբէի, Սելէի, **եւայլն.** ինը հարիւր քսանութ հոգի: ⁹ Անոնց վերատեսուչն էր Զեքրիի որդիին՝ Յովէլ, իսկ Սենուայի որդիին՝ Յուդա **անոր** բիոխանորդն

¹ **Եբր.**՝ առաջինները

² **Կամ**՝ մթերանոցներուն

³ **Կամ**՝ ծառայութեան

⁴ **Եբր.**՝ բարձրացնեն

⁵ **Եբր.**՝ ինը լեցուն ձեռքերը

⁶ **Եբր.**՝ երկրորդն

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Էր քաղաքին վրայ:

10 Քահանաներէն՝ Յովարիբի որդին՝ Յեղայիա, Յաքին, 11 Աստուծոյ տան գերակացուին՝ Աքիտովրի որդիին՝ Մարիորի որդիին՝ Սադովկի որդիին՝ Մեսուղամի որդիին՝ Քեղկիայի որդին՝ Սարայիա: 12 Անոնց եղբայրները, որ Աստուծոյ տան գործը կը կատարէին, ութ հարիւր քսաներկու անձ էին: Մեղքիայի որդիին՝ Փասուրի որդիին՝ Զաքարիայի որդիին՝ Ամասիի որդիին՝ Փաղաղիայի որդիին՝ Յերոհամի որդին՝ Ադայիա, 13 եւ անոր եղբայրները՝ ճահապետները՝ երկու հարիւր քառասուներկու անձ էին: Եմմերի որդիին՝ Մեսեղամոթի որդիին՝ Ահզայի որդիին՝ Ազարիէլի որդին՝ Ամեսայի, 14 ու անոնց եղբայրները՝ հարիւր քսանութ զօրաւոր կտրիճ էին. անոնց վերատեսուչն էր Ագեղողիմի որդին՝ Զաքիէլ:

15 Ղետացիներէն՝ Բունիի որդիին՝ Ասաբիայի որդիին՝ Եզրիկամի որդիին՝ Ասուքի որդին՝ Սեմայիա, 16 նաեւ Սաբեթա ու Յովգաբադ, որոնք Ղետացիներուն գլխաւորներէն էին, Աստուծոյ տան արտաքին գործերուն վրայ հշանակուած էին: 17 Ասափի որդիին՝ Զաքիի որդիին՝ Միքայի որդին՝ Մաթանիա երգողներուն գլխաւորն էր: Շնորհակալական աղօթքները նախ ինք կը սկսէր երգել. անոր եղբայրներէն Բակրոկիա՝ երկրորդն էր, յետոյ՝ Իդիթունի որդիին՝ Գաղաղի որդիին՝ Սամուայի որդին՝ Աբդա: 18 Սուրբ քաղաքը բնակող բոլոր Ղետացիները երկու հարիւր ութսունչորս անձ էին:

19 Դոնապանները՝ Ակկուք, Տեղմոն եւ անոնց եղբայրները, որոնք դոները կը պահպանէին, հարիւր եօթանասուներկու անձ էին:

20 Խրայէլի մնացորդը, քահանաներն ու Ղետացիները ԴՅՈՒԴՅԱՅԻ բոլոր քաղաքներուն մէջ բնակեցան, իւրաքանչիւրը իր ժառանգութեան մէջ: 21 Բայց Նաթանայիմները Ոփաղի մէջ կը բնակէին, եւ Սիա ու Գիսփա Նաթանայիմներուն վրայ հշանակուած էին: 22 Երուսաղէմի մէջ Ղետացիներու վերատեսուչն էր՝ Միքայի որդիին՝ Մաթանիայի որդիին՝ Ասաբիայի որդիին՝ Բանիի որդին՝ Ոզի: Ասափի որդիներէն՝ երգողներէն ոմանք Աստուծոյ տան գործին վրայ հշանակուած էին, 23 որովհետեւ այդ էր թագաւորին պատուէրը իրենց համար, ու երգողներուն ամէն օր եռամբիկ կը տրուէր: 24 Ճուղայեան Զաքայի որդիներէն Մասիգեբէլի որդին՝ Փեթայիա թագաւորին՝ գործակալն էր ժողովուրդին բոլոր գործերուն համար:

ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

25 Ճուղայի որդիներէն ոմանք ալ դաշտավայրի գիւղերուն մէջ բնակեցան, այսինքն՝ Կարիաթ-Արբայի եւ անոր գիւղերուն մէջ, Ղերոնի եւ անոր գիւղերուն մէջ, Կաբեսեէլի եւ անոր գիւղերուն մէջ, 26 Յեսուայի, Մոլադայի, Բեթփաղէթի, 27 Ասերսուաղի, Բերսաբէի եւ անոր գիւղերուն մէջ, 28 Սիկելակի, Մեքոնայի եւ անոր գիւղերուն մէջ, 29 Ենոեմոնի, Սարայի, Յերիմութի, 30 Զանովի, Ողողոսի եւ անոնց գիւղերուն մէջ, Լաքիսի եւ անոր դաշտավայրին մէջ, Ազեկայի եւ անոր գիւղերուն մէջ: Անոնք Բերսաբէն մինչեւ Ենովմի

^գ Երը՝ առաջնորդին

^դ Կամ՝ Հրէաստանի

^ե Երը՝ հաստատ բան

^գ Երը՝ ձեռքին տակ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

ձորը՝ բնակեցան:

31 Բենիամինի որդիները՝ **բնակեցան** Գաբայէն մինչեւ Մաքմաս, Այիա, Բեթէլ եւ անոր գիտերուն մէջ, 32 Անաթովթ, Նոր, Անանիա, 33 Հասոր, Ռամա, Գեթթայիմ, 34 Հաղիդ, Սեբոյիմ, Ներաղադ, 35 Դովհ, Ովնով ու Գեքարասիմ:

36 Ղետացիներէն **ոմանք** Յուղայի եւ Բենիամինի մէջ բաժնուած էին:

ՁԱՀԱՆԱՑԱԿԱՆ ՂԵՏԱՅԻՆ ԵՐՈՒ ՅԱՆԿԸ

12

Ահա՛ւասիկ Սաղաթիէլեան Զօրաբարէլի ու Յեսուի հետ բարձրացող քահանաներն ու Ղետացիները.— Սարայիա, Երեմիա, Եզրաս, 2 Ամարիա, Մալուք, Թետտուս, 3 Սեքենիա, Հռէում, Սերամոթ, 4 Աղդով, Կանաթոն, Աբիա, 5 Միամին, Մովադիա, Բեղգա, 6 Սեմայիա, Յովարիթ, Յեղայիա, 7 Սալլու, Ամոկ, Ջեղկիա, Յեղայիա: Յեսուի օրերը, ասո՞նք էին քահանաներուն գլխաւորները՝ իրենց եղբայրներով:

8 Ղետացիները.— Յեսու, Բանուի, Կադմիէլ, Սարաբիա, Յուղա, **ու** Մաթանիա՝ որ շերգչախումբին վրայ **նշանակուած** էր, ինք եւ իր եղբայրները: 9 Անոնց եղբայրները՝ Բակրոկիա եւ Ուննի՝ անոնց դիմաց **իրենց** պաշտօնին վրայ էին:

ՅԵՍՈՒ ՁԱՀԱՆԱՑԱՊԵՏԻՆ ԶԱՐՄԸ

10 Յեսու ծնաւ Յովակիմը, Յովակիմ ծնաւ Եղիասիթը, Եղիասիթ ծնաւ Յովիադան, 11 Յովիադա ծնաւ Յովնաթանը, ու Յովնաթան ծնաւ Յադուան:

ՁԱՀԱՆԱՑԱԿԱՆ ԴԱՍԻՆ ԳԼԽԱԻՐՆԵՐԸ

12 Յովակիմի օրերը՝ հետեւելաներն էին նահապետ քահանաները.— Սարայիայէն՝ Մարայիա, Երեմիայէն՝ Անանիա, 13 Եզրասէն՝ Մեսուղամ, Ամարիայէն՝ Յոհանան, 14 Մալուքէն՝ Յովնաթան, Սաբանիայէն՝ Յովսէփ, 15 Հարիմէն՝ Եղնա, Մարիոթէն՝ Ջեղկայ, 16 Աղդովէն՝ Զաքարիա, Կանաթոնէն՝ Մեսուղամ, 17 Աբիայէն՝ Զեքրի, Մինիամինէն, Մովադիայէն՝ Փաղտի, 18 Բեղգայէն՝ Սամուա, Սեմայիայէն՝ Յովնաթան, 19 Յովարիթէն՝ Մաթանայ, Յեղայիայէն՝ Ոզի, 20 Սալլուէն՝ Կալլայ, Ամոկէն՝ Եբեր, 21 Ջեղկիայէն՝ Ասաբիա, Յեղայիայէն՝ Նաթանայէլ:

ՁԱՀԱՆԱՑԱԿԱՆ ԵՒ ՂԵՏԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

22 Եղիասիթի, Յովիադայի, Յոհանանի ու Յադուանի օրերը՝ Ղետացիները, **այսինքն՝ անոնց** նահապետները, արձանագրուեցան, նաեւ քահանաները, մինչեւ պարսիկ Դարենի թագաւորութիւնը: 23 Ղետիի որդիներուն նահապետները ժամանակագրութեան գիրքին մէջ արձանագրուեցան՝ մինչեւ Եղիասիթեան Յոհանանի օրերը:

ՏԱՅԱՐԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

24 Ղետացիներուն գլխաւորներն էին՝ Ասաբիա, Սարաբիա, եւ Կադմիէլի որդին՝ Յեսու:

^է Եբր.՝ բնակեցան

^ա Եբր.՝ շնորհակալութիւն երգող խումբին

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

Անոնց եղբայրները իրենց դիմաց կը կայսէի՛ց, որպէսզի Աստուծոյ մարդուն՝ Դաւիթի պատուէրին համաձայն գովաբանեն ու շնորհակալ ըլլան, իրարու քով պաշտօն կատարելով: **25** Մաթանիա, Բակրուկիա, Աբրիա, Մեսուղամ, Տեղմոն եւ Ակկուք՝ դռներու շտեմարաններուն մէջ պահապան եղող դռնապաններն էին: **26** Ասոնք պաշտօնի վրայ էին Յովսեղեկեան Յեսուի որդիին՝ Յովակիմի օրերը, ու Նէմիա կուսակալին եւ Եղրաս քահանային **ու** դպիրին օրերը:

ՆԵՄԻԱ ԿԸ ՆՈՒԻՐԱԳՈՐԾԷ ՔԱՂԱՔԻՆ ՊԱՐԻՍՊԸ

27 Երուսաղէմի պարիսպին նաւակատիքին ատենը՝ Ղետացիները փնտոեցին իրենց բոլոր տեղերուն մէջ, որպէսզի զանոնք Երուսաղէմ բերեն եւ նաւակատիքը կատարեն ուրախութեամբ, շնորհակալական Երգերով, ծնծղաններով, տալիդներով ու քնարներով: **28** Երգողներուն որդիները հաւաքուեցան Երուսաղէմի շրջակայ դաշտէն, Նետոփաթացիներու գիւղերէն, **29** «Գաղգաղայի տունէն» ու Գաբրայի եւ Ազամօթի դաշտերէն. արդարեւ Երգողները Երուսաղէմի շուրջ գիւղեր կառուցաներ էին իրենց համար: **30** Քահանաներն ու Ղետացիները մաքրուեցան, եւ ժողովուրդը, դռներն ու պարիսպը մաքրեցին:

31 Յուղայի իշխանաւորները պարիսպին վրայ բարձրացուցի, ու երկու մեծ գերգչախումբ նշանակեցի: **Մէկը** պարիսպին վրայ՝ աջ կողմը քալեց, դէպի Աղբի դուռը. **32** անոր Ետեւէն գացին Ովսէիա ու Յուղայի իշխանաւորներուն կէսը, **33** նաեւ Ազարիա, Եղրաս, Մեսուղամ, Յուղա, **34** Բենիամին, Սեմայիա ու Երեմիա, **35** եւ փողերով՝ քահանաներու որդիներէն՝ Ասափի որդիին՝ Զաքուրի որդիին՝ Միքիայի որդիին՝ Մաթանիայի որդիին՝ Սեմայիայի որդիին՝ Յովնաթանի որդին՝ Զաքարիա, **36** եւ անոր Եղբայրները՝ Սեմայիա, Ազարիէլ, Միլալայ, Գիլալայ, Մաայ, Նաթանայէլ, Յուղա **ու** Անանի, Աստուծոյ մարդուն՝ Դաւիթի նուագարաններով. անոնց առջեւէն Եղրաս դպիրը կ'երթար: **37** Աղբիւրի դուռը հասնելով, իրենց առջեւ եղող Դաւիթի քաղաքին աստիճաններէն բարձրացան՝ պարիսպին զառիվերէն, Դաւիթի տունէն վեր դէպի արեւելք՝ մինչեւ Զուրի դուռը:

38 Միւս երգչախումբը հակառակ կողմը՝ գնաց պարիսպին վրայ, ու ես՝ անոր Ետեւէն, նաեւ ժողովուրդին կէսը, Փուռերու աշտարակէն մինչեւ Լայն պարիսպը, **39** եւ Եփրեմի դրան վրայէն, Հին դրան վրայէն, Չուկերու դրան վրայէն, Անանայէլի աշտարակէն ու Մէայի աշտարակէն մինչեւ Ոչխարներու դուռը, եւ Բամտի դուռը կանգ առին: **40** Երկու երգչախումբներն ալ Աստուծոյ տան մէջ կայնեցան, նաեւ ես եւ ատենակալներուն կէսը՝ որոնք ինծի հետ էին, **41** ու քահանաները՝ Եղիակիմ, Մաասիա, Մինիամին, Միքիա, Եղիովենայի, Զաքարիա **եւ** Անանիա՝ փողերով, **42** ու Մաասիա, Սեմայիա, Եղիազար, Ոզի, Յոհանան, Մեղքիա, Եղամ ու Եգեր: Այն ատեն Երգողները **իրենց** վերատեսուչին՝ Յեզերիայի հետ իրենց **ծայնը** լսել տուին: **43** Այդ օրը մեծ զոհեր մատուցանեցին եւ ուրախացան, որովհետեւ Աստուած՝ մեծապէս ուրախացուց զանոնք: Կիներն ու

^բ Կամ՝ Բերգաղաղայէն

^գ Եբր.՝ շնորհակալութիւն Երգող խումբ

^դ Եբր.՝ կայնեցուցի

^ե Եբր.՝ դիմացէն

^գ Եբր.՝ մեծ ուրախութեամբ

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

զաւակներն ալ ուրախացան, եւ Երուսաղէմի ուրախութիւնը հեռաւոր տեղերէն ալ լսուեցաւ:

ՊԱՇԱՍՈՒՆԵՒ ՊԱՏՐԱՍՈՒԹԻՒՆ ՏԱԶԱՐԻՆ ՄԷՋ

44 Այդ օրը մարդիկ նշանակուեցան այն սենեակներուն վրայ, որոնք բարձրացնելիք ընծաներուն, Երախայրիքին ու տասանորդներուն **յատկացուած էին իբր** շտեմարան, որպէսզի անոնց մէջ դիզեն քաղաքներուն արտերէն **բերուած** քահանաներուն եւ Ղետացիներուն օրինաւոր բաժինները: Արդարեւ Յուդա Պաշտօն կատարող՝ քահանաներուն եւ Ղետացիներուն համար ուրախացաւ, 45 որովհետեւ անոնք՝ երգողներուն ու դռնապաններուն հետ՝ իրենց Աստուծոյն պաշտօնը եւ մաքրութեան պաշտօնը կը կատարէին, Դաւիթի **ու** անոր որդիին՝ Սողոմոնի պատուէրին համաձայն: 46 Արդարեւ վաղուց՝ Դաւիթի եւ Ասափի օրերը՝ երգողներու գլխաւորներ կային, նաև Աստուծոյ գովաբանութեան ու շնորհակալութեան երգեր: 47 Զօրաբարէլի օրերը եւ Նէմիայի օրերը՝ ամբողջ Խորայէլը երգողներուն ու դռնապաններուն բաժինները կու տար, ամէն օր՝ իր բաժինը. **սուրբ բաները** Ղետացիներուն կը Պէրապահէին, Ղետացիներն ալ Ահարոնի որդիներուն կը վերապահէին:

^է **Եբր.**՝ առաջիններուն

^լ **Եբր.**՝ կայնող

^բ **Եբր.**՝ բանը

^ծ **Եբր.**՝ սրբացնէին

13

Այդ օրը Մովսէսի գիրքն կարդացուեցաւ ժողովուրդին “առջեւ, եւ հոն գրուած գտնուեցաւ թէ Ամմոնացիներն ու Մովաբացիները Աստուծոյ համախմբումին մէջ յալիտեան մտնելու չեն, **2** որովհետեւ անոնք հսրայէլի որդիները հացով եւ ջուրով չդիմաւորեցին, հապա Բաղաամը անոնց դէմ վարձեցին, որպէսզի զանոնք անիծէ. բայց մեր Աստուածը անէծքը օրհնութեան փոխեց: **3** Երբ Օրէնքին **խօսքերը** լսեցին, բոլոր խառնածինները հսրայէլէն զատեցին:

ՆԵՄԻԱՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԵՐԸ

4 Բայց ասկէ առաջ, մեր Աստուծոյն տան **սենեակներուն** վերատեսուչը՝ Եղիասիր քահանան, **Տուրիայի** մերձաւորը, **5** անոր մեծ սենեակ մը պատրաստեր էր՝ ուր առաջ կը դնէին **հացի** ընծաները, կնդրուկը եւ անօթները, ցորենին, քաղցուին ու իւղին տասանորդները, նաեւ **Ղետացիներուն**, երգողներուն եւ դոնապաններուն համար որոշուածը, ու քահանաներուն **տրուած** բարձրացնելիք ընծաները: **6** Այդ ամբողջ ատենը ես երուսաղէմ չէի, որովհետեւ Բարեկոնի Արտաշէս թագաւորին երեսուներկրորդ տարին թագաւորին գացեր էի: Ժամանակէ մը ետք՝ թագաւորէն “արտօնութիւն առի”, **7** ու երուսաղէմ գալով Եղիասիրի ըրած չարիքը հասկցայ, որ Աստուծոյ տան գալիթին մէջ Տուրիայի համար մթերանոց մը պատրաստեր էր: **8** Շատ դժգոհեցայ, եւ Տուրիայի տան բոլոր առարկաները սենեակէն դուրս նետեցի: **9** Յետոյ հրամայեցի որ սենեակները մաքրեն, եւ Աստուծոյ տան անօթները, **հացի** ընծան ու կնդրուկը հոն վերադարձուցի: **10** Նաեւ տեղեկացայ թէ **Ղետացիներուն** բաժինները տրուած չէին, քանի Պաշտօնը կատարող **Ղետացիներէն** ու երգողներէն իւրաքանչիւրը իր արտը փախած էր: **11** Ուստի **ատենակալները** յանդիմանեցի” եւ ըսի. «Ինչո՞ւ Աստուծոյ տունը **այսպէս** լքուած է»։ ապա “զանոնք հաւաքեցի, ու զանոնք իրենց պաշտօնին մէջ **հաստատեցի**: **12** Այն ատեն ամբողջ Յուդան ցորենին, քաղցուին եւ իւղին տասանորդը շտեմարանները տարաւ: **13** Շտեմարաններուն վրայ **Սեղեմիա** քահանան, **Սադովկ** դպիրը, ու **Ղետացիներէն**՝ **Փադայիան** կարգեցի, – **Մաթանիայի** որդիին՝ **Զաքուրի** որդիին՝ **Անան** ալ անոնց քով էր, – որովհետեւ անոնք հաւատարիմ կը սեպուիին. անոնց **գործը** իրենց եղբայրներուն բաժին տալ էր: **14** Ո՞վ իմ Աստուածս, յիշէ՛ զիս ասոր համար, ու մի՛ շնչեր իմ

^ա **Երբ.**՝ ականջներուն

^բ **Կամ** մթերանոցներուն

^գ **Երբ.**՝ խնդրեցի

^դ **Երբ.**՝ գործը

^ե **Երբ.**՝ ատենակալներուն հետ վիճեցայ

^գ **Այսինքն**՝ Ղետացիներն ու երգողները

^է **Երբ.**՝ կայնեցուցի

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

բարեգործութիւններս, որ իմ Աստուծոյս տան մէջ եւ անոր պաշտօնին մէջ կատարեցի:

15 Այդ օրերը Հրէաստանի մէջ տեսայ ոմանք՝ որ Շաբաթ օրը հնձանին մէջ խաղող կը կոխէին, ցորենի որաներ կը մտցնէին, էշերու վրայ կը բեռցնէին, նաեւ գինի, խաղող, թուզ եւ ամէն տեսակ բեռ, ու զանոնք Շաբաթ օրը երուսաղէմ կը բերէին. անոնց դէմ ժբողոքեցի՝ այն օրը երբ իրենց ուտեստեղէնը կը ծախէին: 16 Հոն Տիրացիներ ալ կը բնակէին. ծուկ եւ ամէն տեսակ հապրանք կը բերէին, ու Շաբաթ օրը Յուրաքանչյան որդիներուն եւ երուսաղէմի մէջ կը ծախէին: 17 Յուրաքանչյան ազնուականները յանդիմանեցի ու անոնց ըսի. «Այս ի՞նչ չար արարք է որ դուք կը գործէք՝ Շաբաթ օրը պղծելով: 18 Զեր հայրերն ալ այսպէս չըրի՞ն. ուստի մեր Աստուածը այս ամբողջ չարիքը բերաւ մեր վրայ եւ այս քաղաքին վրայ, ու դուք Շաբաթը պղծելով՝ աւելի բորբոքում կը բերէք Իսրայէլի վրայ»: 19 Ուստի հրամայեցի որ երուսաղէմի դռները Շաբաթէն առաջ գոցուին՝ երբ դռները սկսին շուրջի մէջ ըլլալ. նաեւ հրամայեցի որ անոնք չբացուին՝ մինչեւ որ Շաբաթը անցնի: Իմ սպասաւորներէս ոմանք դռներուն քով տեղաւորեցի, որպէսզի ո՛չ մէկ բեռ Շաբաթ օրը ներս մտնէ: 20 Վաճառականները եւ ամէն տեսակ հապրանք ծախողները մէկ կամ երկու անգամ երուսաղէմէն դուքս գիշերեցին: 21 Ես զանոնք յանդիմանեցի՝ ըսելով. «Դուք ինչո՞ւ պարիսպին քով կը գիշերէք. եթէ կրկին այդպէս ընէք, ձեզ պիտի ծերբակալեմ»: Այդ ատենէն ի վեր անգամ մըն ալ Շաբաթ օրը չեկան: 22 Ղետացիներուն ալ հրամայեցի որ մաքրուին, ու Շաբաթ օրը սրբացնելու համար գան դռները պահպանեն: Ո՛վ իմ Աստուածս, յիշէ՛ զիս ասոր համար ալ, եւ խորակ իմ վրաս՝ քու մեծ կարեկցութեանդ համաձայն:

23 Այդ օրերը Հրեաներ տեսայ, որոնք ազովտացի, ամմոնացի ու մովաբացի կիներու հետ ամուսնացած՝ էին: 24 Անոնց որդիներուն կէսը ազովտերէն կը խօսէր. «Երբայերէն խօսիլ չէին գիտեր, հապա մէկ կամ միւս ժողովուրդին լեզուն կը խօսէին: 25 Հետեւաբար զանոնք յանդիմանեցի, զանոնք անիծեցի, անոնցմէ ոմանք ալ ծեծեցի եւ իրենց մազերը փետեցի: Ապա Աստուծոյ անոնց երդում ընել տուի՝ ըսելով. «Զեր աղջիկները անոնց որդիներուն պիտի չտաք, ու անոնց աղջիկներէն ծեր որդիներուն կամ ձեզի պիտի չառնէք իբր կին: 26 Ասով չէ՞ր՝ որ Իսրայէլի Սողոմոն թագաւորը մեղանչեց. թէպէտ շատ ազգերու մէջ անոր պէս թագաւոր չկար, իր Աստուծոյն սիրելի էր, եւ Աստուած զինք ամբողջ Իսրայէլի վրայ թագաւոր կարգեր էր, օտարազգի կիները անո՞ր ալ մեղանչել տուին: 27 Ուստի հիմա «ձեզ թողո՞նք» որ այս ամբողջ մեծ չարիքը գործէք, եւ

բ Եբր.՝ կարեկցութիւններս

բ Կամ՝ պահպանութեան

ծ Եբր.՝ վկայեցի

հ Եբր.՝ ծախուելիք

լ Եբր.՝ կայնեցուցի

ի Եբր.՝ ծախուելիք

ծ Եբր.՝ կիներ բնակեցուցած

դ Եբր.՝ հրէերէն

է Եբր.՝ ձեզի մտիկ ընե՞նք

ՆԵՄԻԱՅԻ ԳԻՐՔԸ

օտարազգի կիներու հետ ամուսնանալով՝ մեր Աստուծոյն հանդէա ուխտազանց ըլլաք»։
28 Եղիասիք քահանայապետին որդիին՝ Յովիադայի որդիներէն **մէկը** Որոնացի Սանաբաղատի փեսան էր. հետեւաբար զայն քովէս ծվոճուեցի։ 29 Ո՞վ իմ Աստուածս, յիշէ՛ զանոնք, քանի որ պղծեցին քահանայութիւնը եւ Դքահանաներուն ու Ղետացիներուն ուխտը։ 30 Այսպէս՝ զանոնք բոլոր օտարազգիներէն մաքրեցի, եւ քահանաներուն ու Ղետացիներուն պաշտօնները ծվերահաստատեցի, **անոնցմէ** իւրաքանչիւրը իր գործին վրայ **նշանակելով**։ 31 Նաեւ որոշուած ատենները **կատարուելիք** փայտի մատուցումն ու երախայրիքը **վերահաստատեցի**։ Ո՞վ իմ Աստուածս, յիշէ՛ զիս բարիքի համար։

^Ճ **Եբր.**՝ փախցուցի

^Դ **Եբր.**՝ քահանայութեան

^Ճ **Եբր.**՝ կայնեցուցի